ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ
ԿԱՄԱՎՈՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

ՀՈՒՆԻՍ, 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՋԴԱԿՆԵՐ 4

ՋԵԿՈՒՅՑԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 2

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 5

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (People) 5

ԿԶՆ1 ԱՄԵՆՈՒՐԵՔ ՎԵՐԱՑՆԵԼ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՐ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐՈՎ ՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ 6

ԿԶՆ 2. ՎԵՐԱՑՆԵԼ ՍՈՎԸ, ՀԱՄՆԵԼ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ՍՆՈՒՑՄԱՆ, ԽԹԱՆԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 10

ԿՆԶ 3 ԱՊԱՀՈՎԵԼ ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔ ԵՎ ԽԹԱՆԵԼ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՆԿԱԽ ՏԱՐԻՔԻՑ 14

ԿԶՆ 4 ԱՊԱՀՈՎԵԼ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԽԹԱՆԵԼ ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 18

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ (PROSPERITY) 26

ԿԶՆ 7 ԱՊԱՀՈՎԵԼ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ, ՀՈՒՍԱԼԻ, ԿԱՅՈՒՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ 26

ԿԶՆ 8 ԽԹԱՆԵԼ ԿԱՅԱՑԱԾ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ, ԼՐԻՎ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ 30

ԿԶՆ 9 ՍՏԵՂԾԵԼ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ԱՋԱԿՑԵԼ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ և ԽԹԱՆԵԼ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 35

ԿԶՆ 11 ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ՆԵՐԱՌԱԿԱՆ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ, ԱՆՎՏԱՆԳ ՈՒ ԿԱՅՈՒՆ 42

ԿՈՌՈՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ և ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ (PEACE) 44

ԿԶՆ 5 ՀԱՄՆԵԼ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՈՐԱՑՆԵԼ ԲՈԼՈՐ ԿԱՆԱՆՑ ՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ 45

ԿԶՆ 10 ԿՐՃԱՏԵԼ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԻՋԵՎ 52

ԿԶՆ 16 ԽԹԱՆԵԼ ԽԱՂԱՂ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ՝ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՐՁՆԵԼ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈԼՈՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ, ՀԱՇՎԵՏՈՒ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 53

ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ (PLANET) 57

ԿԶՆ 6 ԱՊԱՀՈՎԵԼ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՁԵՎՈՎ ԿԱՌԱՎԱՐԵԼ ՋՈՒՐՆ ՈՒ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ 58

ԿԶՆ 12 ԱՊԱՀՈՎԵԼ ՍՊԱՌՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ՄՈԴԵԼՆԵՐ.... 61

ԿԶՆ 13 ՁԵՌՆԱՐԿԵԼ ԱՆՀԱՊԱՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ 63

ԿԶՆ 14 ԱՊԱՀՈՎԵԼ ՕՎԿԻԱՆՈՍՆԵՐԻ, ԾՈՎԵՐԻ ՈՒ ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ 65

ԿԶՆ 15 ՊԱՀՊԱՆԵԼ. ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԵՎ ԽԹԱՆԵԼ ՑԱՄԱՔԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ԱՊԱՀՈՎԵԼ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՊԱՅՔԱՐԵԼ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԴԵՄ, ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԵՎ ՇՐՋԱԴԱՐՁԵԼ ՀՈՂԵՐԻ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄԸ, ԿԱՍԵՑՆԵԼ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏԸ 65

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ (PARTNERSHIP) 67

ԿԶՆ 17 ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱԿՏԻՎԱՑՆԵԼ ԳԼՈԲԱԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՈՒՆ ԱՅՍ ՆՊԱՏԱԿԻ 68

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԸ 72

ՀԵՏԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 74

ՀԻՄՆԱԿԱՆ ԱԶԴԱԿՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանալով ՄԱԿ-ի անդամ և ընդունելով համամարդկային արժեքների, մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության հաստատման սկզբունքները՝ որպես պետական գաղափարախոսության անբաժանելի մաս, ակտիվորեն մասնակցում է ՄԱԿ-ի շրջանակներում ծավալվող աշխատանքներին: 2015թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Նյու Յորքի կենտրոնական գրասենյակում պաշտոնապես ընդունվված կայուն զարգացման նոր հավակնոտ օրակարգը կարևորագույն ռազմավարական համաշխարհային փաստաթղթերից է, որն ստացավ «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030» անվանումը: Այն իր մեջ ներառում էր հռչակագիրը, կայուն զարգացման 17 նպատակներն ու 169 թիրախները, նպատակների իրականացման միջոցների ու վերանայված գլոբալ համագործակցությանը վերաբերող բաժինը, ինչպես նաև դիտարկման ու հետագա գործողությունների ծրագրային շրջանակը:

2018 թվականի ամռանը, երբ Հայաստանն առաջին անգամ ներկայացնում էր Կամավոր ազգային վերանայման զեկույցը, Հայաստանում արդեն իսկ մայիսին տեղի էր ունեցել խաղաղ, ոչ բռնի Թավշյա հեղափոխություն: Սակայն այդ ժամանակ ներկայացված զեկույցը հիմնականում արտացոլում էր մինչ այդ գրանցված հաջողությունները, ձեռբերումներն ու թերությունները, իսկ սույն զեկույցում ի լրումն երկարաժամկետ ցուցանիշների, տեղ են գտել հիմնականում վերջին 2 տարում արձանագրված հաջողությունները, բարեփոխումները, ձեռբերումները, թերություններն ու մարտահրավերները: Զեկույցի հիմնական շեշտադրումը կլինի ԿԶՆ 16-ի ուղղությամբ արձանագրված հաջողությունները, սակայն անմասն չեն մնա նաև մյուս բոլոր ԿԶՆ-երի վերաբերյալ ինքնագնահատման արձանագրումները:

Հայաստանում 2018 թվականից սկսած տեղի են ունեցել մի շարք բարեփոխումներ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը, օրենքի գերակայությանը, կոռուպցիայի դեմ պայքարին, քրեական ենթամշակույթի դեմ պայքարին, հանրային կառավարման բարեփոխումներին և ռազմավարական պլանավորմանը, տնտեսական և սոցիալական բնագավառների փոփոխություններ:

Այստեղ հարկ է ընդգծել քաղաքական կամքը, որը դրսևորվել է օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի, ժողովրդավարության ամրապնդման նկատմամբ, իրավական դաշտի կատարելագործումը, ռազմավարությունների մշակման և դրա միջոցով պատշաճ պլանավորման

գործընթացի իրականացումը, պետական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության պատշաճ աշխատանքը:

Տնտեսական բնագավառում անհրաժեշտ է ընդգծել 2008 թվականից ի վեր ամենաբարձր տնտեսական աճի 7.6% մակարդակը, որն արձանագրվել է 2019 թվականին, արտահանման աճի միտումը, զբոսաշրջության աճը, բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացումը և նրանց կողմից ստեղծվող պրոդուկտների ու մատակարարվող ծառայությունների աճը, ռազմավարական պլանավորման գործընթացները (ՓՄՁ, արդյունաբերության, զբոսաշրջության, գործարար միջավայրի բարելավման, ռազմարդյունաբերության և այլ ռազմավարական փաստաթղթերի մշակումը):

Սոցիալական բնագավառում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են տարբեր խմբերի աշխատողների աշխատավարձերի բարձրացմանը (ինչպես, օրինակ, ուսուցիչներ, բժիշկներ, փրկարարներ և այլն), նպաստների և կենսաթոշակների բարձրացմանը, այսինքն՝ կենսամակարդակի բարելավմանը, ինչպես նաև նվազագույն կենսաթոշակի չափի սահմանմանը, առողջապահական ծառայությունների և դրանցից օգտվող շահառուների խմբերի ընդլայնմանը, կրթական միջավայրի բարելավմանը և այլն:

Այս ամենը կարևոր, բայց ոչ բավարար քայլեր են, որոնք ուղղված են 5P (People, Planet, Prosperity, Peace, Partnership) բաղադրիչները պահպանելուն: Առկա են մի շարք մարտահրավերներ, որոնք դեռևս պետք է իրականացվեն Կայուն զարգացման նպատակներն ու թիրախներն ամբողջապես կենսագործելու համար: Նմանատիպ մարտահրավերներից են դատական բարեփոխումները, խտրականության բացառման օրենսդրական մեխանիզմները, կլիմայի փոփոխության նվազման գործընթացները, բնական ռեսուրսների օգտագործման ու էներգետիկ բազմազանեցման խնդիրները, և իհարկե կորոնավիրուսի առաջացրած սոցիալ-տնտեսական նոր մարտահրավերները:

Կայուն զարգացման նպատակներին հասնելու և Հայաստանում բարձրարժեք կենսակերպ ու միջավայր ապահովելու համար Կառավարությունը, խիստ կարևորելով ռազմավարական պլանավորման գործընթացը և ոլորտային բարեփոխումների օրակարգեր ձևավորելու հրամայականը, նախաձեռնել է շուրջ երեք տասնյակ ոլորտային ռազմավարությունների, ինչպես նաև Հայաստանի 2020-2050 թվականների վերափոխման ռազմավարության մշակման գործընթացը: Նշված ոլորտային ռազմավարությունների շուրջ մեկ տասնյակը հավանության են արժանացել 2019 թվականին (Հակակոռուպցիոն բարեփոխումների, Մարդու իրավունքների պաշտպանության, Դատական և իրավական բարեփոխումների, Քրեակատարողական և պրոբացիայի, Գյուղատնտեսության, Հանրային ֆինանսների կառավարման, Հարկային

համակարգի վարչարարության, Գենդերային քաղաքականության իրականացման, Աշխատիր Հայաստան), իսկ մնացած ռազմավարական փաստաթղթերը գտնվում են քննարկման տարբեր փուլերում:

Հարկ է նաև նշել, որ 2017 թվականի նոյեմբերի 24-ին Հայաստանի և Եվրոպական Միության միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ներքո (որի կիրարկման ճանապարհային քարտեզն արդեն իսկ հաստատվել է և գտնվում է իրականացման փուլում) ևս առկա են տարբեր ոլորտներում մի շարք բարեփոխումներ իրականացնելու գործնթացներ, որոնց իրականացումը ևս կհամընկնի ԿՀՆ-երով և դրանց թիրախներով սահմանված ցուցանիշների հետ:

ՆԱԽԱԲԱՆ

«2018թ.-ի երկիր» այսպես է բնութագրվել Հայաստանը «The Economist»-ի կողմից՝ հիմնվելով այն դիտարկման վրա, թե որ երկիրն է առավելագույնը բարելավվել հիմնարար ժողովրադավարական բարեփոխումների շնորհիվ: Ժողովրդավարական վերափոխումը դրսևորվել է 2018 թվականի մայիսի խաղաղ, ոչ բռնի Թավշյա հեղափոխությամբ, որը ցույց է տվել հայ հասարակության քաղաքական հասունության և իրավական գրագիտության բարձր մակարդակը:

Նշված գնահատականին Հայաստանն արժանացել է նաև ի շնորհիվ 2018 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած արտահերթ Խորհրդարանական ընտրությունների: Ըստ ԵԱՀԿ-ի գնահատականների 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններն անցկացվել են հիմնարար ազատությունների պահպանմամբ և վայելել են հանրության լայն շրջանակների վստահությունը:

Նախորդ 2 տարիներին Կառավարության գործունեությունը ուղղված է եղել օրենքի գերակայության խթանմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը: Հայաստանի առաջընթացը հաստատվել է նաև հեղինակավոր միջազգային կազմակերպությունների տարբեր զեկույցների վարկանիշավորման աղյուսակներում զբաղեցրած դիրքով, ինչպիսիք են Ֆրիդոմ Հաուսը, Գելափ ինստիտուտը և այլն:

Հայաստանի ժողովրդավարական անցումն արձանագրվել է նաև «Economist Intelligence Unit»-ի «Ժողովրդավարական ինդեքս 2019» վարկանիշավորման աղյուսակում: Ըստ այդ ցուցանիշի, չնայած որ ժողովրդավարական ինդեքսի միջին գնահատականն աշխարհի մակարդակով անկում է ապրել, Հայաստանը ուշագրավ բարելավում է արձանագրել և նշանակալից քայլեր ձեռնարկել ժողովրդավարական բարեփոխումների ուղղությամբ՝ 17 կետով բարելավելով իր դիրքը՝ զբաղեցնելով 86-րդ հորիզոնական: Նմանատիպ բարձր գնահատականի Հայաստանն արժանացել է նաև V-Dem ինտիտուտի կողմից, որի 2020 թվականի զեկույցի համաձայն Ազատ ժողովրդավարության համաթվում Հայաստանը գրանցել է առաջընթացի երկրորդ ամենաբարձր արդյունքն աշխարհում:

Բրիտանական «Legatum» վերլուծական ինստիտուտի՝ 2019-ի Բարգավաճման ինդեքս վարկանիշում Հայաստանը մեկ տարում իր դիրքը բարելավել է միանգամից 7 կետով՝ 167 երկրների շարքում զբաղեցնելով 61-րդ հորիզոնականը: Տվյալ հետազոտության անցկացման 10 տարիների ընթացքում Հայաստանը նման բարձր վարկանիշ երբեք չի ունեցել:

«Freedom Barometer»-ի 2019թ.-ի տվյալներով՝ Հայաստանը նախորդ տարվա համեմատ իր դիրքերը բարելավել է 7,21 միավորով և հավաքելով 60,14 միավոր՝ 45 երկրների շարքում զբաղեցրել է 35-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա 37-րդ հորիզոնականի փոխարեն: Ինդեքսում նշվում է, որ 2019թ.-ին

առաջընթաց արձանագրած փայլուն օրինակներն են Հայաստանն ու Հյուսիսային Մակեդոնիան:
«Freedom House»-ի «Համացանցի ազատության մասին 2019 թ.» զեկույցում Հայաստանն իր դիրքերը բարելավել է 5 հորիզոնականով՝ դասվելով «ազատ» երկրների շարքին (76 տոկոս 100-ից), իսկ նույն կազմակերպության «Ազատությունն աշխարհում 2019» զեկույցում Հայաստանի դիրքերը բարելավվել են 6 միավորով (53%)՝ համարվելով մասնակի ազատ: Չնայած «Freedom House»-ի «Անցումային ժողովրդավարության երկրները 2020» (Nations in Transit 2020) զեկույցի համաձայն Հայաստանն ունի ընդհամենը 33.3 տոկոս 100-ից, անուամենայնիվ անհրաժեշտ է նաև արձանագրել, որ Երևանում ԱՄՆ դեսպանատունը բարձր գնահատականի է արժանացրել Հայաստանի ժողովրդավարության բարելավման ցուցանիշը՝ վկայակոչելով այդ զեկույցը, որտեղ Հայաստանը գրանցել է ժողովրդավարության բարելավման ամենաբարձր երկամյա ցուցանիշը, որպիսին այս զեկույցի պատմության ընթացքում դեռևս ոչ մի երկիր չէր գրանցել:

Gallup ամերիկյան ինստիտուտի «Օրենք և կարգ 2019 համաթիվ» զեկույցում, որը գնահատում է տարբեր երկրների ջանքերը՝ ուղղված արդար, խաղաղ և ներառական հասարակություն ունենալուն, Հայաստանն իր դիրքերը բարելավել է 5 հորիզոնականով:

Հայաստանը հավատարիմ է դեպի 2030թ. միտված կայուն զարգացման օրակարգով նախատեսված նպատակների իրագործմանը և ՀՀ կառավարության կողմից ջանքեր են գործադրվում՝ ներառելու կայուն զարգացման օրակարգ 2030-ը ՀՀ կողմից ոլորտային բարեփոխումների շրջանակներում, ինչպես նաև ազգայնացնելու և տեղայնացնելու դրանք՝ ազգային ռազմավարություններում և քաղաքական փաստաթղթերում: Այսպես, 2019թ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ և ԿԶՆ ազգային կենտրոնի աջակցությամբ մեկնարկել է «Օրենքի գերակայությունը և ԿԶՆ-ները Հայաստանի բարեփոխումների օրակարգում» պիլոտային ծրագիրը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ազգայնացնել ԿԶՆ 16-ի նպատակները ազգային ռազմավարություններում և այլ քաղաքական փաստաթղթերում, ինչպես նաև բարելավել համապատասխան վիճակագրական տվյալների համակարգը: ԿԶՆ-ներն ազգայնացվել են Արդարադատության նախարարության կողմից մշակված 4 ռազմավարությունների շրջանակներում՝ այն է՝ Հակակոռուպցիոն, Դատական և իրավական բարեփոխումների, Մարդու իրավունքների պաշտպանության, Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի ռազմավարություններում՝ նպատակ առ նպատակ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է համապատասխան ուսումնասիրություն Կայուն զարգացման 16-րդ նպատակի ցուցանիշների վիճակագրության վերաբերյալ՝ դրանց հավաքագրման, առկայության և փոխգործելիության տեսանկյունից՝ հետագայում ինքնաշխատ կերպով վիճակագրական տվյալները հավաքագրելու և դրանք ըստ ԿԶՆ 16-ի համապատասխան թիրախների համապատասխանեցնելու հնարավորության դիտարկմամբ:

ԿԶՆ-երի ռազմավարական ներդաշնակեցման տեսանկյունից հատկանշական է ընդգծել Հայաստանի 2020-2050 թվականների վերափոխման ռազմավարության մշակման գործընթացը, որն իրենից ենթադրում է ազգային գաղափար ներկայացնող, 2050 թվականի Հայաստանի տեսլականն արտահայտող, առաջիկա 10 տարվա կտրվածքով 16 մեգանպատակների կենսագործմանը միտված փաստաթուղթ, որն առանցքային նշանակություն ունի Հայաստանի վերափոխման հավակնության համար: Նշված մեգանպատակները ներառում են գրեթե բոլոր ԿԶՆ-ները՝ ընդգրկելով նաև հավելյալ նպատակներ, ինչպես, օրինակ, երկրի անվտանգությունը:

Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2020-2050

Հայաստանի վերափոխման ռազմավարության մոտեցումը տարբերվում է Հայաստանում նախկին բոլոր երկարաժամկետ ռազմավարությունների տրամաբանությունից, քանի որ այն ենթադրում է ոչ միայն Կառավարության մոտեցումներն ու անելիքները, այլև մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և ընդհանրապես ողջ հայ ժողովրդի, յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ սփյուռքում բնակվող: Ակնկալվում է, որ ռազմավարությունը կլինի կենդանի փաստաթուղթ, որը կներառի ժամանակի հրամայականով պայմանավորված մարտահրավերների արձագանքները:

Ռազմավարության գործողությունները հիմնականում արտացոլված են մեգանպատակների տեսքով, որոնք ներառում են կայուն զարգացման հավակնոտ օրակարգը, և հիմնված են լինելու կայուն զարգացման 3 փոխկապակցված տարրի վրա՝ տնտեսական աճ, սոցիալական ինտեգրում և շրջակա միջավայրի պահպանություն: Ինչպես կայուն զարգացման նպատակները այնպես էլ մեգանպատակները անկախ չեն իրարից և պետք է իրագործվեն համալիր մոտեցման հիման վրա: Սա աննախադեպ նախաձեռնություն է, որի մոտեցումները հավանության են արժանացել քաղաքացիական հասարակության, գործարարների, խորհրդարանականների և այլ շահագրգիռ դերակատարների կողմից ու պարբերաբար քննարկվում են տարբեր ձևաչափերով:

Մեգանպատակներ 2030

- **Մեգանպատակ 1 Կիրթ և կարողունակ ազգ և քաղաքացի**

Սա ներառում է ԿԶՆ 4, ԿԶՆ 9:

- **Մեգանպատակ 2 Պաշտպանված Հայաստան**

Սա ներառում է ԿԶՆ 16, ԿԶՆ 11:

- **Մեգանպատակ 3 Արդյունավետ և հաշվետու պետական կառավարում**

Սա ներառում է ԿԶՆ 16:

- **Մեգանպատակ 4 Առողջ և ապահով ազգ և քաղաքացի**

Սա ներառում է ԿԶՆ 3, ԿԶՆ 10:

- **Մեգանպատակ 5 Բազմազավակ և բարեկեցիկ ընտանիք**

Սա ներառում է ԿԶՆ 1, ԿԶՆ 5:

- **Մեգանպատակ 6 Իրավական Հայաստան**

Սա ներառում է ԿԶՆ 16:

- **Մեգանպատակ 7 Մշակված արտադրանքի զանգվածային արտահանում**

Սա ներառում է ԿԶՆ 8, ԿԶՆ 9, ԿԶՆ 10:

- **Մեգանպատակ 8 Մաքուր և կանաչ Հայաստան**

Սա ներառում է ԿԶՆ 7, ԿԶՆ 13, ԿԶՆ 15:

- **Մեգատպատակ 9 Տարածքային խելամիտ զարգացում**

Սա ներառում է ԿԶՆ 11, ԿԶՆ 2, ԿԶՆ 10:

- **Մեգատպատակ 10 Զանգվածային հայրենադարձություն և ինտեգրում**

Սա ներառում է ԿԶՆ 10, ԿԶՆ 1, ԿԶՆ 4, ԿԶՆ 8, ԿԶՆ 17:

- **Մեգատպատակ 11 Աշխարհի հետ կապված Հայաստան**

Սա ներառում է ԿԶՆ 9, ԿԶՆ 11:

- **Մեգատպատակ 12 Արտադրողական և պատասխանատու ֆերմերություն**

Սա ներառում է ԿԶՆ 2, ԿԶՆ 6, ԿԶՆ 11, ԿԶՆ 12:

- **Մեգանպատակ 13 Վերականգնվող և հանրամատչելի էներգիա**

Սա ներառում է ԿԶՆ 7, ԿԶՆ 13, ԿԶՆ 15:

- **Մեգանպատակ 14 Գործարարների համար գրավիչ Հայաստան**

Սա ներառում է ԿԶՆ 8, ԿԶՆ 9, ԿԶՆ 16, ԿԶՆ 17:

- **Մեգանպատակ 15 Գիտելիքահեն (ոչ նյութական) (Հայաստան**

Սա ներառում է ԿԶՆ 4, ԿԶՆ 8, ԿԶՆ 9:

- **Մեգանպատակ 16 Ճանաչված, հարգված և հյուրընկալ Հայաստան**

Սա ներառում է ԿԶՆ 4, ԿԶՆ 9, ԿԶՆ 16:

ԶԵԿՈՒՅՑԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ինստիտուցիոնալ շրջանակ

Դեռևս 2015 թվականին «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակների ուղղություններով ազգային զարգացման ծրագրերի և հիմնախնդիրների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացը և դրանում հասարակայնության լայն շերտերի մասնակցությունն ապահովելու համար ստեղծվել էր Կայուն զարգացման նպատակների խորհուրդ, որն իրականացնում էր խորհրդակցական մարմնի գործառույթներ: Խորհրդի գործառույթների՝ ԿԶՆ-երի շուրջ առավել կենտրոնացման և դրանք ռազմավարական պլանավորման գործընթացներում առավել ակտիվացման նպատակով, ինչպես նաև Խորհրդի կազմում հասարարական կազմակերպությունների մրցույթի միջոցով ընդգրկման և ռոտացիոն սկզբունքով փոփոխման ու պետական համակարգի ներկայացվածության ընդլայնման նպատակով 2020 թվականին Վարչապետի որոշմամբ հաստատվեց Կայուն Զարգացման նպատակների նոր խորհրդի կազմը և աշխատակարգը, ինչպես նաև նաև խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման մրցույթի և ռոտացիայի կազմակերպման կարգը: Այսպիսով ԿԶՆ իրականացման ինստիտուցիոնալ շրջանակը համապատասխանեցվեց “whole-of-government and whole-of-society ” սկզբունքին, քանի որ Խորհրդի աշխատանքներին բացի խորհրդի անդամ հանդիսացող օրենսդիր, գործադիր մարմինների ներկայացուցիչներ, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից և Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակից ներկայացուցիչներ, այլև ելնենով նիստի օրակարգից և քննարկվող հարցերի շրջանակներից գործարար ասոցիացիաների ներկայացուցիչներ, գիտա-ուսումնական հաստատությունների, արհմիությունների ներկայացուցիչներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ և այլ շահագրգիռ անձինք: Խորհրդի խնդիրներն են՝ սահմանել Հայաստանի Հանրապետությունում Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակների (այսուհետ՝ ԿԶՆ) ազգայնացման առաջնահերթությունները և ուղղությունները, դրանք ամրագրել ազգային ռազմավարական ծրագրերում և մինչև 2030 թվականը ապահովել ԿԶՆ-ի համալիր իրականացման ընթացքի համակարգումը և մշտադիտարկումը:

Տվյալների հավաքագրում

Զեկույցի մշակման աշխատանքներում տվյալների հավաքագրումն ամենաբարդ աշխատանքներից մեկն է: Սույն զեկույցին հավաստիություն հաղորդելու համար հավաքագրվել և վերլուծվել են տվյալներ տարբեր աղբյուրներից, ներառյալ՝

1. պաշտոնական վիճակագրությունից.
2. ոլորտային ներհատուկ տեղեկատվություն նախարարություններից և այլ պետական գերատեսչություններից.
3. ոլորտային ռազմավարական փաստաթղթերից տվյալներ.
4. տեղեկատվություն հավաքագրում բիզնեսից, քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերից. սա խիստ կարևորվում է ոչ միայն քանակական, այլև որակական տեղեկատվություն ստանալու տեսանկյունից, հիմնարար խնդիրներն ավելի լավ հասկանալու և VNR- ի մշակման գործընթացը ներառական դարձնելու համար:

Մեթոդաբանությունը և շահագրգիռ անձիք

Զեկույցը պատրաստելու համար կիրառվել են մեթոդների և մոտեցումների մի շարք համադրումներ, մասնավորապես՝ փաստաթղթերի ուսումնասիրություն, քաղաքականության վերլուծություն, քննարկումներ, պաշտոնական վիճակագրության և տարբեր հետազոտությունների վերլուծություն, որակական և քանակական տվյալների ուսումնասիրություն: Զեկույցում ներառված են նաև SDG ազգային **հաշվետվողականության** ստացված տվյալները, որտեղ ներառված են հասանելի SDG տվյալներ գլոբալ ցուցիչների համար: Վերլուծության համար հիմք են ծառայել 2018 և 2019 թվականների, մասամբ 2020 թվականի ընթացքում արձանագրված տվյալները, սակայն մի շարք դեպքերում ցուցանիշներն առավել ամբողջական ներկայացնելու համար ուսումնասիրվել է ավելի երկարաժամկետ ժամանակահատված, այդ թվում SDG ազգային հարթակում հասանելի 2015-2019 թվականներն ընկած ժամանակահատվածը՝ հասանելի 164 ցուցանիշի համար: Հարկ է ընդգծել, որ ՀՀ վիճակագրական կոմիտեն գործարկում է Ազգային հաշվետվողականության հարթակ (ԱՀՀ) Կայուն Զարգացման Նպատակների (ԿԶՆ) ցուցանիշների համար (http://sdg.armstat.am/), որը հանդիսանում է ազգային վիճակագրության և հարակից տեղեկատվության տարածման ու հաղորդակցման գործիք գլոբալ ԿԶՆ-ի ցուցանիշների համար, որոնք ապահովում են ԿԶՆ-ի նկատմամբ առաջընթացի մշտադիտարկման շրջանակը:
Բացի այդ 2018 թվականի մարտի 21-ին ընդունվել է “Պաշտոնական վիճակագրության մասին” ՀՀ օրենքը (ՀՕ-194-Ն), որն ամբողջովին հիմնված է

ՄԱԿ-ի Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների վրա: (“Պաշտոնական վիճակագրության մասին” ՀՀ օրենքը մշակված է “Պաշտոնական վիճակագրության մոդելային օրենք Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի համար” հիման վրա[1]:

Զեկույցի նպատակն է՝

1. բացահայտել նպատակների և թիրախների ձեռքբերման մակարդակը.
2. ներկայացնել ձեռքբերումները և լավ փորձը.
3. բացերի և մարտահրավերների վերհանում.
4. այլ նպատակների հետ կապի բացահայտում.
5. ձևավորված խնդիրների վերլուծություն.
6. հետագա անելիքների մատնանշում.
7. նախորդ՝ 2018 թվականին ներկայացված զեկույցի բացերի նկատմամբ ներկայիս իրավիճակի նկարագրությունը.
8. հաշվի առնելով կորոնավիրուսի տարածումն ամբողջ աշխարհում և դրա բացասական հետևանքները՝ նաև ներկայացնել Հայաստանում իրավիճակը և դրան ուղղված քայլերը:

[1] https://www.unece.org/fileadmin/DAM/stats/publications/2016/ECECESSTAT20163_E.pdf):

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Կայուն զարգացման նպատակները համընկնում են երկրների զարգացման ռազմավարական թիրախներին և մոտեցումներին, քանի որ դրանք իրենցից ներկայացնում են բոլոր երկրների փոխհամաձայնեցված ընդհանուր տեսլականներ, որոնք ենթակա են կենսագործման առավել որակյալ բնաշխարհ և կենսակերպ ապահովելու համար: Հայաստանում ևս ԿԶՆ-երը և դրանց թիրախները մեծամասամբ համընկնում եմ ռազմավարական պլանավորման և դրանց կենսագործման գործընթացների հետ:
ԿԶՆ-երի իրականացման ընթացքը և դրանց փոխգործակցությունն առավել առարկայական ներկայացնելու համար ԿԶՆ-երը սույն զեկույցում խմբավորվել են 5Փ բաժիններով.

- Մարդկային կապիտալի զարգացում (People).
- Ենթակառուցվածքների մատչելիության և տնտեսական զարգացման ապահովում (Prosperity).
- Շրջական միջավայրի պաշտպանություն և կլիմայի փոփոխության դեմ պայքար (Planet).
- Կոռոպցիայի դեմ պայքար, մարդու իրավունքների պաշտպանություն և արդարություն (Peace).
- Համագործակցություն հանուն կայուն զարգացման նպատակների կենսագործման (Partnership):

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (People)

Հայաստանը չունենալով բնական ռեսուրսների էական պաշարներ խիստ արժևորում է մարդկային կապիտալի զարգացման դերակատարությունը: Դրա պատճառով է, որ Կառավարությունն ավելացնում է այդ ուղղություններում իրականացվող պետական ծախսերը:

2020 թվականի պետական բյուջեով շուրջ 13%-ով ավելացել են սոցիալական նշանակության ու մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված հատկացումները: Մասնավորապես՝

- Սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերը 2017-ի համեմատ ավելացել են 20%-ով, 2018-ի համեմատ՝ 18%-ով, 2019-ի համեմատ՝ 8%-ով:
- Առողջապահության ոլորտին ուղղվող ծախսերը 2017-ի համեմատ ավելացել են 37%-ով, 2018-ի համեմատ՝ 43%-ով, 2019-ի համեմատ՝ 15%-ով:

- Կրթության ոլորտին ուղղվող ծախսերը 2017-ի համեմատ ավելացել են 30%-ով, 2018-ի համեմատ՝ 32%-ով, 2019-ի համեմատ՝ 25%-ով:

Հատկանշական է ընդգծել, որ մարդկային կապիտալի զարգացման հարցում ոչ միայն կարևոր են այս բաժնում նշված ԿԶՆ-երի իրականացմանն ուղղված ջանքերը, այլև մյուս ԿԶՆ-երի կենսագործման առաջընթացները, քանի որ աղքատության հաղթահարման, կրթական որակի բարելավման, առողջապահության հասանելիության հարցերն առնչվում են նաև համապատասխան ենթակառուցվածքների, տնտեսական աճի, պետական և համայնքային միջոցների առկայությունից, կոռուպցիայի դեմ պայքարից և այլն:

ԿԶՆ1 ԱՄԵՆՈՒՐԵՔ ՎԵՐԱՑՆԵԼ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՐ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐՈՎ ՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ

Չնայած վերջին տարիներին Հայաստանում աղքատության ցուցանիշը շարունակում է նվազել, այնուամենայնիվ այն դեռևս լուրջ մարտահրավեր է և պետության սոցիալական քաղաքականության առաջնային պայքարի ոլորտներից մեկը: Աղքատության դեմ պայքարը բնականաբար հնարավոր չէ իրականացնել միայն պետական իշխանության գործիքակազմի կիրառմամբ, այն ենթադրում է նաև ողջ երկրի բնակչության, սփյուռքի, միջազգային գործընկերների համատեղ ջանքերը:

Ցուցանիշներ

Աղքատության ցուցանիշները դիտարկելիս պետք է ընդգծել, որ շատ երկրներում աղքատության ցուցանիշի չափման միավորը տարբեր է: ԿԶՆ 1-ի առաջին թիրախում նշված ցուցանիշը դիտարկվում է օրական 1. 25 դոլարից ցածր ապրող բնակչությունը, որը տարբերվում է Հայաստանի ավելի բարձր ցուցանիշից :

Գծապատկեր 1.1



Դեռևս 2018թ.-ի զեկույցում նշվում էր, որ բնակչության 30 տոկոսը դեռևս գտնվում է աղքատության գծից ներքև, ընդ որում՝ ամենախոցելի խմբում երեխաներն են և այս առումով առկա է տարածաշրջանային անհամաչափ զարգացման բարձր մակարդակ: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով 2018թ աղքատության մակարդակը գնահատվել է 23,5% ՝ 2017-ի համեմատ նվազելով 2,2 տոկոսային կետով, իսկ 2008թ. աղքատության մակարդակի համեմատ (27,6%) նվազելով 4,1 տոկոսային կետով: 23.5% աղքատների ընդհանուր թվաքանակի մեջ 1.0 %-ը ծայրահեղ աղքատ է, 9.6%-ը՝ չափավոր աղքատ (առանց ծայրահեղ աղքատների), իսկ մնացած 12.9%- ը՝ ուղղակի աղքատ է:

2008-2018թթ.-ին աղքատության մակարդակի անկումը քաղաքային և գյուղական բնակավայրերում կազմել է համապատասխանաբար 2.7 և 6.2 տոկոսային կետ: Մայրաքաղաք Երևանում ըստ տարածաշրջանների աղքատության մակարդակն ամենացածրն է (19.9%) և այն 1.5 անգամ ցածր է, քան Երևանից դուրս՝ այլ քաղաքային բնակավայրերում: 2008թ.-ի համեմատ 2018թ.-ին աղքատության անկումը Երևանում կազմել է 0.2 տոկոսային կետ, իսկ Երևանից դուրս՝ այլ քաղաքային բնակավայրերում՝աղքատության մակարդակը մնալով ամենաբարձրը, այնուամենայնիվ, 5.5 տոկոսային կետով զիջել է 2008թ.-ի մակարդակը: Երբ բնակչության կենսամակարդակը դիտարկվում է ըստ քաղաք-գյուղ բաշխվածության, աղքատների մեծ մասը (65.8%) քաղաքաբնակներ են:

Ինչպես նշվել է 2018 թվականի զեկույցում, այնպես էլ հիմա, 0-5 և 6-9 տարեկան երեխաների շրջանում, աղքատության մակարդակն ավելի բարձր է այլ

տարիքային խմբերի համեմատ և նրանք շարունակում են մնալ ամենախոցելի խումբը:

Վիճակագրական կոմիտեի զեկույցում նշվում է, որ աղքատության հաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 63,2 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 1,1% կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների՝ ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին: Ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի 1,0 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 0,02%-ը՝ ի հավելումն ծայրահեղ աղքատներին արդեն իսկ ուղղված սոցիալական աջակցության եւ ապահովելով բարձր հասցեականություն: Միջազգային փորձը վկայում է, որ սոցիալական աջակցության տրամադրման անթերի հասցեականություն ապահովելը շատ անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող փաստացի միջոցներն իրականում շատ ավելին են:

2018թ. աղքատության խորությունը (աղքատության պակասուրդը) գնահատվել է 4.2%՝ 2017թ. 4.4%-ի համեմատ, իսկ աղքատության սրությունը (աղքատների միջև եղած սպառման անհավասարությունը) գնահատվել է 1.1%՝ 2017թ. 1.2%-ի համեմատ: 2018թ. աղքատության մակարդակը գյուղական բնակչության համեմատ ավելի բարձր է քաղաքային բնակչության շրջանում, որը 2017թ. նկատմամբ նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 24.9%: Դրան զուգահեռ արձանագրվել է 5.5 տոկոսային կետով աղքատության մակարդակի նվազում գյուղական բնակավայրերում՝ կազմելով 21.3%:

Գծապատկեր 1.2



Գծապատկեր 1.2



Բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներից է Ջինիի գործակիցը, որը 2018թ.-ին ըստ եկամուտների կազմել է 0.360 (2017թ. 0.359-ի դիմաց), իսկ ըստ սպառման՝ 0.298 (2017թ. 0.289-ի դիմաց): Դա վկայում է այն մասին, որ Հայաստանում բնակչության անհավասարությունը (բևեռացումը) ըստ եկամուտների ցուցանիշի ավելի խորն է սպառման ագրեգատի ցուցանիշի համեմատ:

Աղյուսակ 1.1

Gini coefficient	2016	2017	2018
Income inequality	0.375	0.359	0.36
Consumption inequality	0.286	0.289	0.298

Իրականացված քայլեր

2018-2019 թթ. աղքատության հաղթահարման նպատակով ՀՀ կառավարության հիմնական շեշտադրումներն են սոցիալական աջակցությունը, գումարային աջակցությունը և առկա ծրագրերի հասցեականության բարձրացումը: Նմանատիպ օրինակներից են.

- երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի եռապատկումը երկրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ կազմելով 150 000 դրամ (300 դոլար),
- մանկատան շրջանավարտներին բնակարանի գնման վկայագրերի տրամադրման գործընթացը,
- աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, այծաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար աջակցության տրամադրման ծրագրեր,
- օրենքի մակարդակով նվազագույն կենսաթոշակի չափ հասկացութաւն սահմանումը, որը հավասարեցվել է ծայրահեղ աղքատության գծին

ԿՔՆ 2. ՎԵՐԱՑՆԵԼ ՍՈՎԸ, ՀԱՄՆԵԼ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ՍՆՈՒՑՄԱՆ, ԽԹԱՆԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Գյուղատնտեսության աճի տեմպերը անցած տասնամյակի ընթացքում զգալիորեն տատանվել են: Այդուհանդերձ, գյուղատնտեսությունը պահպանել է իր առանցքային նշանակությունը զբաղվածության և գյուղական բնակչության

եկամուտների, ինչպես նաև տեղական սննդամթերքի մատակարարման մասով և սննդամթերքի ու խմիչքների արտահանման ընդլայնման աղբյուր է:

Ցուցանիշներ

Համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության՝ 1 գյուղացիական տնտեսության ստեղծած արժեքը 2018 թվականին կազմել է 2.82 մլն. Դրամ: 2029 թվականի ռազմավարական պլանավորմամբ այն կեռապատկվի՝ կազմելով 7.45 մլն. դրամ:

Համաձայն վերոնշյալ ռազմավարության 1 գյուղացիական տնտեսության միջին եկամուտը 2019 թվականին կազմել է 0.640 մլն դրամ: Ակնկալվում է, որ 2024 թվականին կկազմի 2.0 մլն դրամ, իսկ 2029 թվականին՝ 5մլն. դրամ:

Գծապատկեր 2.1

ՀՀ-ում վարելահողերի չափերը, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և բազմամյա տնկարկների տարածությունները



Իրականացված բայլեր

ՀՀ-ում Գյուղատնտեսական հողատեսքերի, հատկապես վարելահողերի և բազմամյա տնկարկների, նպատակային ու արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը գնալով ավելի է կարևորվում: Վերջին տարիներին նկատվում է վարելահողերի ըստ նշանակության նպատակային օգտագործման զգալի նվազում, ինչով պայմանավորված Կառավարության կողմից գործուն քայլեր են ձեռնարկվելու չօգտագործվող վարելահողերը նպատակայնորեն օգտագործելու ուղղությամբ՝ համապատասխան խթանների ու մեխանիզմների մշակման միջոցով:

Գյուղացիական տնտեսությունների կողմից 2018 թվականին կաթիլային ոռոգման համակարգեր են ներդրվել 164 հա տարածություններում, իսկ 2019 թվականին 1. 75 անգամ ավել (280 հա):

ՀՀ կառավարությունը 2019 թվականի ընթացում սկսել է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր, որով պետության կողմից աջակցություն է ցուցաբերվում տոհմային կենդանիներ ձեռք բերող տնտեսավարողներին, որի արդյունքում ձեռք են բերվում հարյուրավոր խոշոր եղջերավոր կենդանիներ:

Համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովին ներկայացված գյուղատնտեսության պետական աջակցության ծանուցման՝ ՀՀ-ում գյուղատնտեսությունում պետական աջակցության չափը 2018 թվականին կազմել է 9.3մլրդ դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ) մեկնարկել են համագործակցությունը հետևյալ համընդհանուր նպատակների համար՝

- վերացնել սովը Հայաստանում մինչև 2030թ., հասնել պարենային ապահովության և բարելավված սնուցման,
- ուժեղացնել կայուն զարգացման իրագործման միջոցները և ակտիվացնել գլոբալ գործընկերությունը հանուն այս նպատակի:

Հայաստանում իր նպատակին հասնելու համար, ՊՀԾ-ն և իր ռազմավարական գործընկերները ջանքեր են ներդնում այն ծրագրերի և նախաձեռնությունների իրականացման մեջ, որոնք ուղղված են՝

- պարենային ապահովության և սնուցման խթանմանը,
- ազգային կարողությունների և համակարգերի հզորացմանը:

«Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի միջոցով ՊՀԾ-ն ներդրումներ է կատարում մարդկային կապիտալի մեջ՝ Հայաստանում առողջությունը, կրթությունը, սոցիալական պաշտպանությունը և արտադրողականությունը բարելավելու նպատակով:

Մինչև 2020 թ.-ի համար որպես թիրախ սահմանված սերմերի, մշակաբույսերի, գյուղատնտեսական և ընտելացված կենդանիների և դրանց վայրի ազգակիցների գենետիկական բազմազանության պահպանման նպատակով (Թիրախ 2.5) ՀՀ կառավարությունը շրջանառության մեջ է դրել «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև գործող գիտական կենտրոններում գյուղատնտեսական մշակաբույսերի սորտերի, դրանց վայրի ազգակիցների և տեղածին այլ բույսերի սերմերի պահպանման նպատակով առկա են գենետիկական բանկեր:

Հայաստանում ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվել է «Խաղողի գենետիկ ռեսուրսների պահպանումը և կայուն օգտագործումը Հայաստանում» ծրագիրը, որի շրջանակներում հիմնվել է 1,36 հա մակերեսով խաղողի տեղածին սորտերի կոլեկցիոն այգի:

Կենդանական գենետիկական պաշարների պահպանման համար իրականացվում են «ՀՀ տավարաբուծության 2019-2024թթ. զարգացման» և «Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության» ծրագրերը, որոնց շրջանակներում տնտեսավարողների կողմից արդեն իսկ ձեռք է բերվել 375 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր և 203 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Գործում է «Արևելյան Եվրոպայում խոշոր եղջերավոր կենդանիների երկակի նշանակության կոմբինացված ցեղերի գենոֆոնդի պահպանման և բարելավման» ծրագիր: Ծրագրի գլխավոր խնդիրը հանրապետությունում «Կովկասյան գորշ» ցեղի խոշոր եղջերավոր կենդանիների գենոֆոնդի պահպանումն ու կատարելագործումն է: Այդ նպատակով նախատեսվում է իրականացնել առկա «Կովկասյան գորշ» ցեղի խոշոր եղջերավոր կենդանիների հաշվառում, տվյալների բազայի ստեղծում, ինչպես նաև դրանց հետագա համակարգված բուծման հայեցակարգի մշակում:

ԿՆՋ 3 ԱՊԱՀՈՎԵԼ ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔ ԵՎ ԽԹԱՆԵԼ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՆԿԱԽ ՏԱՐԻՔԻՑ

Համաձայն վիճակագրական տվյալների՝ 2017-2019թթ մայրական մահվան դեպքերի թիվը չի գերազանցել 13-ը՝ տատանվելով 3-13 դեպքի շրջանակներում, իսկ մայրական մահվան ինդեքսը եռամյա կտրվածքով չի գերազանցել 20/100000 կենդանածնության հաշվարկով, որը ցածր է ԱՊՀ երկրների ցուցանիշից, սակայն գերազանցում է միջին եվրոպական մակարդակը (ԱՊՀ՝ 21/100000, Եվրոպա՝ 6/1000000 կենդանածնության հաշվարկով):

Գծապատկեր 3.1



Չնայած մայրական մահացության կառուցվածքում գերակշռում են մայրական մահվան անուղղակի պատճառները (օրինակ՝ էքստրագենիտալ ծանր ախտաբանություններ), այնուամենայնիվ դեռևս առկա են կանխարգելելի պատճառներից մայրական մահվան դեպքեր, որոնց պարագայում հայտնաբերվել են բժշկական օգնության կազմակերպման և իրականացման ոչ պատշաճ պատրաստվածության, ախտաբանությունների վաղ ախտորոշման ու ուղեգրման, այլ կազմակերպչական և գործելակարգային թերություններ:

Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով 2018-2019թթ ընթացքում գործող ծրագրերի շրջանակներում իրականացվել է

- Ծննդօգնության ծառայությունների արդիականացում, պետական պատվերի շրջանակներում հատկացումների ծախսարդյունավետության և բուժօգնության որակի բարձրացում, ծննդօգնության հիմնարկների թվի օպտիմալացում:

- Կառուցվածքային ու կադրային բարեփոխումների և ռեսուրսների վերաբաշխման միջոցով մեծացել են ֆինանսական հոսքերն ու ծառայությունների որակը:
- Գնահատվել են ծննդօգնության հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների ենթակառուցվածքները, կադրային, սարքավորումային հագեցվածությունը, կարողություններն ու հնարավորությունները, որի արդյունքում վերանայվել են ծննդօգնության բժշկական կազմակերպման մակարդակները՝ հստակեցնելով գործառույթներն և չափանիշները:
- Վերանայվել են ծննդօգնության ծառայությունների մատուցման պարտադիր պայմաններն ու պահանջները, սահմանվել են ծննդօգնության բժշկական կազմակերպությունների անհետաձգելի բժշկական օգնության պատրաստվածության չափանիշները՝ որպես մայրական մահացության իջեցման պարտադիր պահանջ:
- Սահմանվել է մշտադիտարկում ներդված ուղեցույցների ու գործելակարգերի կիրառման նկատմամբ:
- Կատարելագործվել և իրականացվել է մարզային ծննդօգնության ստացիոնարների բուժանձնակազմի՝ մանկաբարձ-գինեկոլոգների գիտելիքների թեստավորում, ընդ որում 75 տոկոսից ցածր միավորներ ստացած բուժաշխատողները ենթարկվել են կրկնակի թեստավորման:
- 2020 թվականի մարտին Կառավարությունը հաստատել է Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման 2020-2023թթ. ծրագիրը և դրա կատարումն ապահովող միջոցառումները , որոնք ուղղված են նախածննդյան հսկողության, մանկաբարձական ստացիոնար բուժօգնության բարելավմանը:

2018-2019թթ. շարունակաբար արձանագրվել է մինչև 5 տարեկան երեխաների և նորածնային մահացության ցուցանիշների կրճատում:

Գծապատկեր 3.2



Այսպես, համաձայն Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների, մինչև 5 տարեկան մահացության ցուցանիշը 2018թ. կազմել է 8.7‰՝ 2017թ. 9.6‰ համեմատությամբ, իսկ 2019թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին այն կազմել է 7,6‰ (բացարձակ թիվ՝ 276), 2018թ. նույն ժամանակահատվածի 8,7‰ (բացարձակ թիվ՝ 317) համեմատությամբ: Նույն միտումն է առկա նաև նորածնային մահացության ցուցանիշի հարցում, այսպես 2015-2017թթ. միջակայքում այն իջել է, սակայն ավելի նվազ տեմպերով՝ (2015թ՝ 6.3‰, 2016թ՝ 6.1‰, 2017թ.՝ 6,1‰): Ցուցանիշի ավելի քան մեկ պրոմիլլային կետով կրճատում է արձանագրվել 2018թ. (5‰):

Նշված ձեռքբերումները պայմանավորվորված են համակարգում իրականացված մի շարք միջոցառումներով, մասնավորապես.

- ընդլայնվել է պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնությունը, մասնավորապես մինչև 7 տարեկան երեխաների փոխարեն անվճար հիվանդանոցային բուժօգնություն են արդեն ստանում մինչև 18 տարեկան բոլոր երեխաները, որի շնորհիվ առկա է երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մատչելիության և որակի զգալի բարելավում,
- պետության կողմից տրամադրվող անվճար բուժօգնության շրջանակում ավելացել են նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մի շարք բժշկական ծառայություններ, որոնք մինչ այդ իրականացվել են վճարովի հիմունքներով,
- չարորակ հիվանդությունների վիրահատական և ճառագայթային բժշկական օգնություն և սպասարկումը ամբողջ բնակչության համար դարձել է անվճար՝ նախկին համավճարային սկզբունքի փոխարեն,

- ի լրումն մինչ այդ գործող «արագ արձագանքման» անհետաձգելի ծառայության, որի միջոցով նորածինների և երեխաների տեղափոխումը մարզային բժշկական կազմակերպություններից իրականացվում էր ռեանիոբիլների միջոցով, 2019 թվականին ներդրվել է ավիացիայի միջոցով իրականացվող «արագ արձագանքման» անհետաձգելի ծառայություն, որի շրջանակներում հեռավոր մարզերից տեղափոխվում են երեխաներ՝ հրատապ բուժօգնություն ստանալու նպատակով,
- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օգնությամբ Երևանի ու մարզերի ծննդօգնության հինգ հաստատություններ վերազինվել են նորածնային ինտենսիվ խնամքի համար անհրաժեշտ հիմնական սարքավորումներով, որոնք թույլ են տալիս առավել բարենպաստ ելքեր ապահովել ուղեղի ախտահարումներ ունեցող և շատ ցածր քաշով ծնված երեխաների համար,

Ձեռքբերումներ են գրանցվել նաև առողջապահական համակարգի այլ ոլորտներում, մասնավորապես՝

- ընդլայնվել են բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող շահառուների շրջանակը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների ցանկերը,
- իրականացվել են բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների կատարելագործման դասընթացներ,
- ներդրվել է սրտամկանի սուր ինֆարկտի անհետաձգելի վիրահատությունների (կորոնար անոթների ստենտավորում) ծրագիր, որն ամբողջ բնակչության համար իրականացվում է անվճար, ինչպես նաև ներդրվել է գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ կաթվածների բուժման (ներառյալ ներերակային թրոմբոլիտիկ թերապիան ալտեպլազա դեղով) ծրագիր, որը ևս ամբողջ բնակչության համար իրականացվում է անվճար,
- չարորակ հիվանդությունների վիրահատական և ճառագայթային բժշկական օգնություն և սպասարկումը ամբողջ բնակչության համար դարձել է անվճար՝ նախկին համավճարային սկզբունքի փոխարեն,
- «Առողջ կյանք» գաղափարախոսությանն ընդառաջ, մեծ քայլ է կատարվել հասարակությունում երկրորդային ծխի վնասակար ազդեցության նվազեցման հարցում՝ օրենսդրական դաշտի կարգավորման միջոցով: Մշակութային հեղաշրջում է տեղի ունենում ծխելու վարքագծի վերաբերյալ, որը կնպաստի ծխողների քանակի նվազեցմանը, հետևաբար ոչ վարակիչ

հիվանդություններով պայմանավորված հիվանդացության և մահացության ցուցանիշների կրճատմանը:

- ապահովվել է նպատակային քանակակազմերի շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության առնվազն 90%՝ շնորհիվ Իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումների իրականացման

2018 թվականին ներկայացված զեկույցում մատնանշված մարտահրավերներից է շարունակում լինել հիվանդության ժամանակ առողջության առաջնային պահպանման նպատակով դիմողների ցածր թվաքանակը: 2018թ.-ին հիվանդության ժամանակ դիմել է առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին բժշկական խորհրդատվության կամ բուժման համար հիվանդների 32.7%-ը, ընդ որում՝ այլ քաղաքներում բնակվողների շրջանում այդ ցուցանիշը կազմել է 30.7%, գյուղաբնակների շրջանում՝ 39.4%, իսկ երևանաբնակների շրջանում՝ 29.1%: Նախորդ տարվա համեմատ հիվանդներն ավելի քիչ են դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման այլ քաղաքներում և Երևանում, մինչդեռ գյուղաբնակների շրջանում նկատվում է բարձրացում (2017թ.-ին այն կազմել է, համապատասխանաբար, 33.5%, 35.7%, և 34.3%):

ԿՋՆ 4 ԱՊԱՀՈՎԵԼ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԽԹԱՆԵԼ ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատահական չէ, որ Հայաստանի փոխակերպման ռազմավարության առաջին մեգանպատակն է կիրթ և կարողունակ ազգ և քաղաքացի ունենալը: Հայաստանում կարևորվում է կրթությունն ու փորձ է արվում աշխարհին ներկայացնել այն բոլոր նորարարությունները, որ ստեղծվում են մեր փոքր, բայց մարդկային կապիտալով հարուստ երկրում:

Վառ օրինակներից մեկը **ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնն** է, որը ներդրվելով Հայաստանում՝ այնուհետև դարձավ արտահանման ապրանք-գաղափար: Կենտրոնի բացումը աշխարհի տարբեր կետերում ապացուցում է, որ ժամանակակից աշխարհում կարևոր չէ երկրի աշխարհագրական դիրքը կամ բնական ռեսուրսների հարստությունը, կարևոր է մարդկային ներուժը, գաղափարը, միտքը, որը չունի սահման: Հայաստանը դառնում է նորարարական գաղափարների գեներացման երկիր, որն արդեն իսկ սկսել է արտահանել իր գաղափարը այնպիսի երկրներ ինչպիսիք են՝ Ֆրանսիան,

Լիբանանը և Գերմանիան, շուտով նաև Ալբանիան: Սա ոչ միայն ԿԶՆ 4-ի դրական օրինակ է, այլև ԿԶՆ 9-ի, ԿԶՆ 8-ի, ԿԶՆ 17-ի:

Առանձնահատուկ օրինակներից է նաև **«Արմաթ» ինժեներական լաբորատորիաների** հիմնման կրթական ծրագիրը, որը ևս սկսել է տեխնոլոգիական կրթության հայկական մոդելի արտահանման գործընթացն աշխարհով մեկ: Ծրագրի հիմնական նպատակն է՝ ուժեղացնել Հայաստանում տեխնիկական կրթության հիմքերը, դպրոցահասակ սովորողներին տալ մասնագիտական կողմնորոշում, պատրաստել տեխնիկական կրթությամբ մասնագիտական աշխատուժ, որը հիմք կհանդիսանա Հայաստանի առաջանցիկ զարգացման համար

Կառավարությունը աջակցում է Արմաթ լաբորատորիաների ներդրմանը, և եթե 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում էր 225 ինժեներական լաբորատորիա, ապա 2019 թվականի ավարտին դրանց թիվը հասել է 575-ի, այսինքն՝ ավելացել է ավելի քան 155 տոկոսով:

Հայաստանի կրթական ոլորտում էական ներդրում ունեցող ծրագրերից է նաև Teach for Armenia-ն: Ծրագիրն ապացուցում է, որ բոլոր երեխաներն ունեն իրենց ներուժը բացահայտելու և լավ կրթություն ստանալու իրավունք՝ անկախ իրենց ծննդավայրից: Teach for Armenia-ի շրջանակներում առաջնորդության զարգացման ծրագրի մասնակիցները մեկնում են հեռավոր գյուղեր, որտեղ սկսում են դասավանդել ուսուցիչների պակաս ունեցող դպրոցներում:

Հայաստանի կրթական համակարգում անվերապահորեն իր տեղն է զբաղեցնում «Այբ» դպրոցը, որի փիլիսոփայությունն ամփոփված է իր նշանաբանի մեջ «Հասկացի՛ր և արա՛»: «Այբ» դպրոցը սովորելու նոր միջավայր է, ուր ազգային հիմքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ եւ փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման: Դպրոցին կից բացվել է ֆաբլաբ՝ **ԱՄՆ-ի Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի** ստեղծած արհեստանոց-լաբորատորիա, որտեղ աշակերտները տեսականը կիրառում են գործնականորեն:

Հայաստանի Դիլիջան քաղաքում է գործում նաև միջազգային հեղինակություն ունեցող UWC քոլեջը: UWC-ն ունի 18 դպրոց և քոլեջ 4 մայրցամաքում, որոնց մեծամասնությունը կենտրոնանում է 16-19 տարիքային խմբի վրա: Ծրագրի շրջանակներում բազմաթիվ երկներից աշակերտները հնարավորություն են ստանում երկու տարի ուսանելու աշխարհի 17 միացյալ

քոլեջներից մեկում՝ դառնալով մշակութային փոխանակման, անկրկնելի փորձառության և որակյալ կրթության կրողը:

2020թ. մայիսի 6-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է ««Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի կարևոր սկզբունքներն են ուսուցման և խնամքի հավասար հնարավորությունները՝ երաշխավորելով բոլորի համար հավասար, մատչելի և հասանելի նախադպրոցական կրթության իրավունքի իրացումը, հավասար հնարավորություններ տրամադրելու, խելամիտ հարմարեցումներով որակյալ ներառականություն և մատչելիություն ապահովելու միջոցով: Օրենքը սահմանում է նաև նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և խնամքի կենտրոնների պարտադիր լիցենզավորում, ինչը հնարավորություն կտա վերահսկել մատուցվող ծառայությունների բովանդակությունը՝ ապահովելով երեխայի զարգացման տարիքային առանձնահատկություններին համապատասխան որակյալ կրթություն: Նախադպրոցական այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրումը կընդլայնի նախադպրոցական ծառայությունների ցանցը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գյուղական փոքրաթիվ բնակավայրերի սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաներին:

Ձեռնարկված քայլեր

2018 և 2019թթ. շարունակվել են համընդհանուր ներառական կրթության ներդնումը, «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցումը, ինչպես նաև՝ սահմանամերձ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցներ գործուղված մանկավարժների փոխհատուցման, մարզերի գյուղական բնակավայրերի (դպրոցից 5 և ավելի կմ հեռավորության վրա գտնվող) մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման ծրագրերը:

Հանրակրթության բովանդակային արդիականացման և որակի բարձրացման նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը սկսել է մասնագիտական խմբերի կողմից հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական չափորոշիչների վերանայման աշխատանքները:

Ցուցանիշներ.

2018-2019 ուսումնական տարում հանրակրթական դպրոցներում տարրական մակարդակը քննությունների դրական արդյունքներով է ավարտել սովորողների 98.80%-ը, հիմնական մակարդակը՝ 98.76%-ը, ավագ մակարդակը՝ 99.38%-ը:

Համաձայն վիճակագրական կոմիտեի տվյալների երեխաների մասնաբաժինը տարրական դպրոցն ավարտելիս, ովքեր ձեռք են բերել առնվազն գիտելիքների նվազագույն մակարդակ ընթերցանությունից և մաթեմատիկայից 2018թ. կազմել է 88.24% (տղաներ՝ 88.27%, աղջիկներ՝ 88.19%):

Գծապատկեր 4.1



Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական ինստիտուտի՝ «Կազմակերպված ուսումնառությանը մասնակցության թիվը (ըստ սեռի)՝ տարրական դպրոց ընդունվելու պաշտոնական տարիքից մեկ տարի առաջ» ցուցանիշը 2018թ. կազմել է 47.5% (տղաներ՝ 45.8%, աղջիկներ՝ 49.5%):

Գծապատկեր 4.2



Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 3-5 տարեկան երեխաների համախառն ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում 2018թ. կազմել է 58.4% (տղաներ՝ 56.5%, աղջիկներ՝ 60.5%):

Ոչ ֆորմալ կրթությանը և ուսուցմանը նախորդ 12 ամիսներին մասնակցել են 32415 երիտասարդներ և մեծահասակներ (իգական՝ 19302, արական՝ 13113):

Ցուցանիշներ /ֆորմալ կրթություն/

2018թ. ուսումնառության ենթակա բնակչության կազմում.

- Նախնական մասնագիտական կրթության համակարգում ընդգրկված սովորողների մասնաբաժինը կազմել է 6.7%,
- Միջին մասնագիտական կրթության համակարգում ընդգրկված սովորողների մասնաբաժինը՝ 11.7%,Բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 38.3%, Բարձրագույն կրթության առաջին աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 52.2%, Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ուսումնական հաստատությունների ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 14.1%,

- Հետբուհական մասնագիտական կրթության համակարգում ընդգրկված սովորողների մասնաբաժինը՝ 0.6%:

Ընդհանուր առմամբ, 2018թ. ուսումնառության ենթակա բնակչության կազմում մասնագիտական կրթության համակարգում ընդգրկվածությունը կազմել է 54.6%:

Համընդհանուր ներառական կրթության համակարգին անցմամբ պայմանավորված՝ տարեցտարի նվազում է առանձին ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների և դրանցում սովորող կարիք ունեցող երեխաների թիվը: 2019 թվականի հունիս ամսվա դրությամբ ՀՀ-ում նախկին 23 հատուկ հանրակրթական դպրոցներից գործել են 17-ը:

Ցուցանիշներ

2018թ. Սովորողների սեռային հավասարության ցուցանիշը կազմել է.

- Տարրական կրթության մակարդակում՝ 1.01
- Հիմնական կրթության մակարդակում՝ 1.01
- Ավագ մակարդակում՝ 1.2
- Միջնակարգ կրթության մակարդակում՝ 1.04
- Նախնական մասնագիտական կրթության մակարդակում՝ 0.42
- Միջին մասնագիտական կրթության մակարդակում՝ 1.26
- Բարձրագույն կրթության առաջին աստիճանում՝ 1.17
- Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում՝ 2.19:

Մինչև 2020 թ. էականորեն և գլոբալ ընդգրկումով բարձրագույն կրթության համակարգում տրամադրվող կրթաթոշակների ընդլայնման՝ 4.բ թիրախի իրականացման նպատակով ՀՀ-ն զգալի քայլեր է ձեռնարկել 2019-2020թթ.միջպետական համաձայնագրերի շրջանակներում օտարերկրյա ԲՈՒՀ-եր գործուղված և օտարերկյա ԲՈՒՀ-երից ՀՀ եկած քաղաքացիների թվաքանակը և քաղաքացիներին տրամադրվող կրթաթոշակներն ավելացնելու առումով: 2020 թվականի հունվարի դրությամբ Էրազմուս + ծրագրի շրջանակներում 74 հայ ուսանողներ սովորում են Եվրոպական 17 երկրներում: 2020 թվականի հունվարի դրությամբ միջպետական համաձայնագրերի շրջանակներում աշխարհի 12 երկրներից ՀՀ-ում կրթաթոշակային ծրագրերով բարձրագույն և հետբուհական կրթություն են ստանալու համար հատկացված է 101 տեղ իսկ Հայաստանից այդ երկրներ ուսանելու համար՝ 109 տեղ: Միջպետական համաձայնագրերի շրջանակներում համալսարանական

անձնակազմը նաև հնարավորություն ունի մասնակցելու վերապատրաստման ծրագրերի:

Աղյուսակ 4.2

Միջպետական համաձայնագրերի շրջանակներում բուհեր գործուղված քաղաքացիների թվաքանակն ըստ երկրների (2019-2020 ուսումնական տարի)

ԵՐԿԻՐԸ	ՀՀ բուհերում գործուղված օտարերկրյա քաղաքացիներ	Օտարերկրյա պետություններ գործուղված ՀՀ քաղաքացիներ
Վրաստան	1	3
Ռումինիայի Հանրապետություն		5
Հորդանանի Հաշիմյան Թագավորություն	30	4
Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն	6	17
Ռուսաստանի Դաշնություն	25	192
Բուլղարիայի Հանրապետություն		3
Լեհաստանի Հանրապետություն		3
ԸՆԴԱՄԵՆԸ	**62**	**Գործուղվածների ընդհանուր թիվը 227**

Ինչպես և նշվել է VNR 2018-ում Հայաստանում հանրակրթությունը մատչելի է բոլորի համար թե՛ տղաների և թե՛ աղջիկների, բայց շարունակում է մարտահրավեր լինել ոչ հավասարաչափ բաշխումը: 2018/2019 ուսումնական տարում սեռային հավասարության ցուցանիշը հանրակրթական դպրոցներում կազմել է 1.04:

Գծապատկեր 4.3



Բավականին նկատելի է աղքատների և ոչ աղքատների ընգրկվածության տարբերությունը, ինչը լուրջ մարտահրավեր է նաև աղքատության հաղթահարման տեսանկյունից: Շարունակվում է խնդրահարույց լինել բարձրագույն կրթության հետ կապված ծախսերի ապահովման և հատկապես դրանց մատչելիության հարցերը, որոնք այն հիմնական պատճառներն են, որով կարելի է բացատրել միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության կրթական համակարգից դուրս մնալը:

Թեև երկիրը որդեգրել է գործողությունների ազգային ծրագիր՝ հանրակրթական համակարգը ներառական դարձնելու համար, սակայն ֆիզիկական միջավայրի, ուսումնական նյութերի մատչելիության, ազգային ստանդարտների կիրառման, հաշմանդամություն ունեցող երեխաների մուտքն ապահովելու համար նախագծման սկզբունքներում դեռևս առկա են բացթողումներ:

Ուրախությամբ կարելի է արձանագրել նաև, որ 2019 թվականին Հայաստանն ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՈ-ի կրթության միջազգային բյուրոյի անդամ:

Հարկ է նշել, որ հաշվի առնելով, որ այժմ ոչ միայն ՀՀ-ում, այլև ողջ աշխարհում տարածում է գտնում հեռահար կրթությունը՝ որպես ոչ ֆորմալ կրթության դրսևորում, քայլեր են իրականացվում էլեկտրոնային կրթությունը ՀՀ ողջ տարածքում հասանելի դարձնելու ուղղությամբ: Այստեղ հարկ է նաև շեշտադրել, որ կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված թե Հայաստանում և թե ամբողջ աշխարհում այս ուղղությամբ իրականացվել են մի շարք քայլեր: Մասնավորապես ՀՀ-ում կիրառելի են դարձնել հեռահաղորդության տարբեր միջոցներով կրթական հաստատությունների կողմից կազմակերպվող

դասընթացները, հեռուստահաղորդումների պատրաստումը և հեռարձակումը հեռուստատեսությամբ, համակարգչային և բջջային հավելվածների կիրառմամբ դասախոսությունների, դասապատրաստումների և այլ դասապրոցեսների իրականացումը:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ (PROSPERITY)

Կառավարության ծրագրի համաձայն՝ առաջիկա հինգ տարիներին՝ ՀՀ կառավարության գործունեությունը միտված է լինելու Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող, արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսություն կառուցելուն: Հետևաբար տնտեսական զարգացման ապահովումը և պատշաճ ենթակառուցվածքների առկայությունը Կառավարության առաջնահերթություններից են:

Վերջին երկու տարում իրականացված բարեփոխումների արդյունքում ավելացել է ենթակառուցվածքների վրա կատարվող ծախսերի մասնաբաժինը, մասնավորապես՝ ճանապարհների, արձանագրվել է տնտեսական աճի էական բարձր ցուցանիշ, ավելացել են արտահանման և առանձին ոլորտների տնտեսական ակտիվության ցուցանիշները:

Հարկ է ընդգծել, որ պատշաճ ենթակառուցվածքների առկայությունը հնարավորություն է ստեղծում ոչ միայն ապահովել տնտեսական բարձր ցուցանիշներ, այլև խթանել կրթության և առողջապահության հասանելիությունը, աղքատության նվազման և զբաղվածության ավելացման հնարավորությունները:

ԿԶՆ 7 ԱՊԱՀՈՎԵԼ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ, ՀՈՒՍԱԼԻ, ԿԱՅՈՒՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի էներգետիկ համակարգում էլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է շուրջ 2,993 ՄՎտ:ՀՀ-ում սպառողների էլեկտրական էներգիայի հասանելիությունը գնահատվում է 99%:

Ըստ վերջին 5 տարիների վիճակագրական տվյալների Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգում ձմեռային պիկը կազմում է 1300 ՄՎտ, իսկ ամառայինը 1040 ՄՎտ: Վերջին ժամանակահատվածում ձմեռային և ամառային պիկերի տարբերությունը զգալի կրճատվել է:

Գծապարկեր 7.1



Հայաստանը զուրկ է հանածո էներգակիրների պաշարներից, բայց փոխարենը Հայաստանի բնությունը շռայլ է այլընտրանքային համարվող էներգետիկ ռեսուրսների առումով՝ քամի, արև, ջուր: Հայաստանը վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության ոլորտում բավականին մեծ ներուժ ունի, սակայն մեր երկրի ունի մեծ կախվածություն ներկրվող էներգակիրներից: Հետևաբար վերականգնվող էներգետիկայի զարգացումը Հայաստանում լուրջ մարտահրավեր է և միջազգային տարբեր գործընկերների հետ ներկայումս իրականացվում են մի շարք քայլեր այդ ուղղությամբ:

Հաջողություններ են գրանցվել արևային էներգետիկայի բնագավառում: Շարունակվել են աշխատանքները ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած Գեղարքունիքի մարզի Մասրիկ տեղանքում 55 ՄՎտ պիկային հզորությամբ Մասրիկ-1 արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրով: Կառավարությունը հավանություն է տվել «Մասդար Արմենիա ծրագիր» ներդրումային ծրագրին, որի շրջանակներում ՀՀ Արագածոտնի և ՀՀ Կոտայքի մարզերի վարչական սահմաններում նախատեսվում է երկու փուլով իրականացնել 400 ՄՎտ ընդհանուր հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանների կառուցում:

Էներգետիկայի զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է մինչև 2030 թվականը արևային էներգիայի արտադրության մասնաբաժինն ընդհանուրի մեջ հասցնել մինչև 15%-ի կամ 1.8 մլրդ կՎտ/ժ-ի:

Հայաստանում այլընտրանքային էներգիայի աղբյուրներից են նաև փոքր ՀԵԿ-երը: 01.04.2020թ. դրությամբ տրված լիցենզիաների համաձայն էլեկտրաէներգիա են արտադրում 187 փոքր ՀԷԿ-եր՝ գումարային շուրջ 374 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Կառուցման փուլում են գտնվում ևս 26 ՓՀԷԿ:

Էներգիայի արտադրության այլընտրանքային աղբյուրների ծավալի մեծացմանը զուգահեռ անհրաժեշտ է նշել, որ շրջակա միջավայրի պահպանման, կլիմայի փոփոխության և կանաչ տնտեսության կարևոր բաղադրիչներ են համարվում նաև էներգաէֆեկտիվության և էներգախնայողության միջոցառումները: Էներկգախնայողության բարեփոխումների կարևոր օրակարգ է հանդիսանում նաև ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, որտեղ առկա են ԵՄ չափանիշներին մոտարկման ենթակա մի շարք պահանջներ: Մեկնարկել է նաև 2021-2030թթ. համար ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային նոր ծրագրի մշակման գործընթացը, որն արդեն 4-րդ նմանատիպ միջոցառումների համալիր է:

Հայաստանի էներգետիկ համակարգի մինչև 2036թ. զարգացման ռազմավարությամբ մինչև 2036 թվականը Հայաստանի էներգետիկ համակարգը պետք ունենա հետևյալ նկարագիրը՝

- Ինքնաբավ և արտահանմանն ուղղված՝ բարձր հուսալիությամբ և ժամանակակից տեխնոլոգիական հագեցվածությամբ, արդիական ենթակառուցվածքներով էլեկտրաէներգետիկական համակարգ,
- Վերակագնվող էներգետիկ պաշարների տնտեսապես արդյունավետ և ողջամիտ օգտագործում՝ բնապահպանական բոլոր չափանիշներին համապատասխան,
- Էներգետիկ հաշվեկշռում վերականգնվող էներգիայի մասնաբաժնի հնարավոր առավելագույն աճի ապահովում,
- Էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների լայնածավալ իրացում,
- էներգախնայողության և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրում կանաչ և գիտելիքահենք տնտեսության անցման գործում,
- Ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով զարգացում, մասնավորապես Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկ/ների կառուցում,
- Բարձր օգտակար գործողության գործակցով նոր էներգաարտադրող հզորությունների ստեղծում

ԿԶՆ 8 ԽԹԱՆԵԼ ԿԱՅԱՑԱԾ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ, ԼՐԻՎ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

2019 թվականը հետհեղափոխական կառավարության գործունեության առաջին լիարժեք տարին էր, և Կառավարությանը հաջողվել է գրանցել 2008 թվականից ի վեր ամենաբարձր տնտեսական աճի մակարդակը՝ 7.6%, որն ամենաբարձրն է ԵԱՏՄ անդամ երկրների, հարևան բոլոր երկրների և եվրոպական տարածաշրջանի երկրների համեմատ:

Գծապարկեր 8.1



Հաշվետու տարում Հայաստանի տնտեսական աճն ուղեկցվել է տնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավմամբ, ցածր գնաճով, ֆինանսական կայուն ցուցանիշներով:

Մշակվել է Արդյունաբերության քաղաքականության 5-ամյա ռազմավարություն, որով նախատեսվում է միջնաժամկետում նպաստել Հայաստանում արդյունաբերության զարգացմանը, արտադրողականության բարձրացմանը, մրցունակության աճին, ներքին և միջազգային թիրախային շուկաներում մասնավոր նախաձեռնողականությանը, առավել արտադրողական

տեխնոլոգիաների ներդրմանն ու նորարարական գաղափարների ընդլայնմանը: Միայն սարքավորումների ներմուծումը խթանելու նպատակով 2019 թվականի ընթացքում Կառավարության կողմից արտոնություն է տրվել 18 ներդրումային ծրագրերի, որի արդյունքում կկատարվեն 95 մլրդ դրամի ներդրումներ, կստեղծվեն մոտ 1226 աշխատատեղեր: Հարկ է նշել, որ Հայաստանում և ՄԱԿ Առևտրի և Զարգացման Համաժողովի (ԺՆև) միջկառավարական մակարդակի Ներդրումների և Ձեռնարկությունների Զարգացման Հանձնաժողովի նիստում ներկայացվել է Հայաստանի համար մշակված «Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն» զեկույցը, որին կհաջորդի կոնկրետ գործողություններին միտված միջոցառումների ծրագիր, բարեփոխումների ճանապարհային քարտեզ:

Հայաստանը (առաջինը տարածաշրջանում) ներառվել է ՏՀԶԿ ՕՈՒՆ կարգավորումների սահմանափակման ինդեքսում՝ գտնվելով առաջին տասնյակում շուրջ 70 երկրների շարքում:

Հայաստանի քաղաքացիների ստեղծարար ներուժի ընդլայնման և իրացման նպատակով «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում կազմակերպում է գործարար կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացներ, որի շնորհիվ 2019 թվականի ընթացքում ստեղծվել են 82 ՓՄՁ նոր սուբյեկտներ:

Հարկ է նշել, որ ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի ՓՄՁ վիճակագրության տվյալների 2018թ.-ին 2017թ.-ի համեմատ ՓՄՁ տնտեսավարողների քանակն ավելացել է 9187-ով և կազմել 68654 միավոր, իսկ դրանցում վարձու աշխատողների թվաքանակն ավելացել է 44778-ով և կազմել 212963 մարդ: Ավելացել է նաև ՓՄՁ տնտեսավարողների կողմից ստեղծված համախառն ավելացված արժեքը 46557.5 մլն. դրամով և կազմել 1417779.9 մլն. դրամ կամ ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների կողմից ստեղծված համախառն ավելացված արժեքի 60%-ը և համախառն ներքին արդյունքի 23.6%-ը:

2019 թվականին ամենաբարձր տնտեսական աճն արձանագրել է կացության և հանրային սննդի ծառայությունների ոլորտը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 26.5%-ով, ինչը 2019 թվականի ընթացքում Հայաստան այցելած զբոսաշրջիկների թվի 14.7%-ով աճի կարևոր արտահայտություններից է:

Հայաստանից ապրանքների և ծառայությունների արտահանումը 2019 թվականի արդյունքներով աճել է 10.3%-ով:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում 2019 թվականին գրանցվել է շրջանառության շուրջ 30% աճ, որը ներառում է համակարգչային ծրագրավորման, ինչպես նաև էլեկտրոնիկայի, միկրոէլեկտրոնիկայի և այլ բարձր տեխնոլիգիական ուղղություններ:

Շնորհիվ իրականացված քաղաքականության՝ միջազգային վարկանիշային գործակալություններն արձանագրված տնտեսական ցուցանիշների և վարվող ոլորտային քաղաքականությունների գնահատման արդյունքում բարձրացրել են Հայաստանի սուվերեն վարկանիշը, մասնավորապես, «Ֆիթչ»-ը այն բարձրացրել է «BB-», իսկ «Մուդիզ»-ը՝ «Ba3» մակարդակի:

2018 թվականի մայիսից մինչև 2019 թվականի վերջ հավելյալ ի հայտ է եկել (ստեղծվել է և ստվերից դուրս է բերվել) ավելի քան 87 հազար աշխատատեղ: 2019 թվականի Հայաստանում գործազրկության մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1.5 տոկոսային կետով, իսկ զբաղվածության մակարդակն աճել է 1.4 տոկոսային կետով:

2018-2019թթ. Ընթացքում ներդրումային ծրագրերի շրջանակներում ստեղծվել է ավելի քան 5000 նոր աշխատատեղ:

Չնայած «Doing Bussiness» 2020թ. զեկույցում Հայաստանը գրանցել է անկում 6 հորիզոնականով նախորդ տարվա համեմատ՝ զբաղեցնելով 190 երկրների շարքում 47-րդ տեղը՝, ընդհանուր առմամբ, Հայաստանն առաջընթաց է արձանագրել 5 ենթացուցիչներով: Զեկույցում նշվում է, որ շինթույլտվությունների մասով Հայաստանն ուժեղացրել է շինարարության որակի նկատմամբ վերահսկողությունը՝ ճարտարապետների և ինժեներների համար սահմանելով ավելի խիստ որակավորման պահանջներ: Աշխատանքներ են տարվել փոքր ներդրողներին պաշտպանելու ուղղությամբ: Հայաստանը հեշտացրել է նաև հարկերի վճարումը կապիտալ ներդրումների դեպքերի համար՝ ընդլայնելով ԱԱՀ-ի կանխիկի վերադարձների տրամադրումը: Արտահանումն ավելի արագ է դարձել՝ թույլ տալով մաքսային հայտարարագրումների առցանց ներկայացումը: Որպես մարտահրավեր պետք է նշել պայմանագրերի կատարման ընթացքում պայմանագրում փոփոխություններ կատարելու համար Հայաստանում սահմանված բավականին երկար ժամկետը՝ 4 ամիսը, ինչը երկարաձգում է աշխատանքի իրականացման բնականոն ընթացքը:

Հարկ է նշել նաև, որ 2019 թվականին մշակվել են մի շարք ռազմավարություններ, ինչպիսիք են Արդյունաբերության քաղաքականության 5-ամյա ռազմավարությունը, Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ռազմավարությունը, Զբոսաշրջության ռազմավարությունը, Գործարար միջավայրի բարելավման ռազմավարությունը:

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Չնայած Զբաղվածության պետական գործակալությունում հաշվառված գործազուրկների թիվը նվազել է, այնուամենայնիվ գործազրկության մակարդակը երկրում շարունակում է լինել մտահոգիչ: Այսպես, 2019 թվականի դեկտեմբերին 2018 թվականի համեմատ Զբաղվածության պետական գործակալությունում հաշվառված գործազուրկների թիվը 64643-ից դարձել է 61766, որոնցից, մասնավորապես՝ 2018 թվականին 16-19 տարեկան գործազուրկ կանանց թիվը եղել է 424, իսկ 2019 թվականին՝ 362, 20-24 տարեկան գործազուրկ կանանց թիվը եղել է 3254, իսկ 2019 թվականին՝ 3022, 25-29 տարեկան գործազուրկ կանանց թիվը եղել է 5878, 2019 թվականին՝ 5379, 30 և ավել տարեկան գործազուրկ կանանց թիվը եղել է 33591, 2019 թվականին՝ 32211:

2019 թվականի տարեսկզբից աշխատանքի է տեղավորվել 13513 անձ, որոնցից 3138-ը՝ կայուն զբաղվածություն ապահովող ծրագրերով (2018 թվականին աշխատանքի է տեղավորվել 11966 անձ, որոնցից 1962-ը՝ կայուն զբաղվածություն ապահովող ծրագրերով):

Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում որպես գործազուրկ հաշվառված է 2453 հաշմանդամություն ունեցող անձ, որոնցից 2019 թվականի ընթացքում զբաղվածության ծրագրերում ընդգրկվել է 426-ը:2019 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության, սոցիալական գործընկերների և ԱՄԿ-ի միջև ստորագրվել է «Արժանապատիվ աշխատանք» ծրագիրն, որը սահմանում է ԱՄԿ-ի և Հայաստանի Հանրապետության միջև համագործակցության գերակայությունները, հիմնական արդյունքները և իրականացման ռազմավարությունները 2019-2023թթ. համար: Ծրագիրն ունի երեք հիմնական գերակայութուն ՝ աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող մեխանիզմների կատարելագործում, զբաղվածության քաղաքականության բարելավում, կանանց և տղամարդկանց զբաղվածության կարողությունների ընդլայնում ու սոցիալական երկխոսության և կոլեկտիվ բանակցությունների ամրապնդում բոլոր մակարդակներում:

2019 թվականի կարևորագույն նախաձեռնություններից է նաև «Աշխատիր, Հայաստան» ռազմավարության ընդունումը, որը միտված է մարդկային կապիտալի զարգացմանը, զբաղվածության խթանման եւ ինստիտուցիոնալ բարեփոխումների միջոցով մարդու կյանքի որակի շարունակական բարելավմանը՝ աշխատանքի և մասնագիտական ինքնիրացման ճանապարհով:

Ռազմավարությամբ նախատեսվում է գործատուների արդյունավետ ներգրավվածություն մասնագիտական կրթության և ուսուցման գործընթացներում, շրջանավարտների մրցունակության բարձրացում եւ իրացման հնարավորությունների ընդլայնում, զբաղվածության արդյունավետ եւ հասցեական ծրագրերի մշակում, զբաղվածության ծառայություն մատուցողների կարողությունների զարգացում, նպաստների համակարգի առաջացրած շահադրդման փոփոխություն, արհմիությունների ինստիտուտի դերի բարձրացում, զբաղվածության փաստահենք քաղաքականության մշակման համար պահանջվող տվյալների հավաքագրում և վերլուծություն և այլն:

2020թ. մեկնարկել է «Մասնագետների պատրաստման ԲՈՒՀ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագիրը: Ծրագրի նպատակն է ԲՈՒՀ-երի և տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների հետ մշակել և իրականացնել համատեղ կրթական/վերապատրաստման արդեն իսկ կիրառված և իրենց արդյունավետությունն ապացուցած ծրագրեր՝ ներգրավելով մասնավոր ընկերություններից ոլորտի պրոֆեսիոնալներին:

2019 թվականին հանրապետությունում միջին ամսական անվանական աշխատավարձն ավելացել է 5.8%-ով: 2020 թվականի հունվարի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձի չեմն էականորեն բարձրացվեց (23.6 տոկոսով)՝ կազմելով 68000 դրամնախկին 55000 դրամի փոխարեն:

2019 թվականի ընդունվել են աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության շրջանակների ընդլայնում նախատեսող իրավական հիմքեր, իրականացվել են մի շարք կարճաժամկետ մասնագիտական ուսուցման ծրագրեր :

Գծապարկեր 8.2



Ներկայումս մշակվել և քննարկումների փոլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների զբաղվածության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որտեղ երիտասարդները հանդիսանում են առաջնային շահառուների շրջանակ, և առանձին միջոցառումներ են նախատեսված նրանց զբաղվածության ապահովման ուղղությամբ:

Երիտասարդության շրջանում զբաղվածության խթանման նպատակով 2019 թվականի ընթացքում զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկվել է 7130 անձ, որից 23.1%-ը կամ 1644-ը՝ 16-29 տարեկան երիտասարդներ:

ԿԶՆ 9 ՍՏԵՂԾԵԼ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ԱՋԱԿՑԵԼ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆԸ և ԽԹԱՆԵԼ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մշակող արդյունաբերությունում 2019 թվականին տնտեսական աճը կազմել է 12%՝ 2008 թվականից հետո առաջին անգամ ՀՆԱ-ի կառուցվածքում 12.1% կշռով դառնալով տնտեսության առաջատար ճյուղը: Արդյունաբերության քաղաքականության 5-ամյա ռազմավարության նախագծի նպատակով նախատեսվում է միջնաժամկետում նպաստել Հայաստանում արդյունաբերության

զարգացմանը, արտադրողականության բարձրացմանը, մրցունակության աճին, ներքին և միջազգային թիրախային շուկաներում մասնավոր նախաձեռնողականությանը, առավել արտադրողական տեխնոլոգիաների ներդրմանն ու նորարարական գաղափարների ընդլայնմանը:

Դիմակայուն ենթակառուցվածքների ստեղծման նպատակով 2019 թվականին Հայաստանում սկսվեց լայնածավալ ճանապարհաշինական աշխատանքներ: 2018-2019 թվականների ընթացքում կատարվել են ՀՀ միջպետական և հանրապետական ճանապարհների վերանորոգման և հիմնանորոգման լայնածավալ աշխատանքներ, ինչպես նաև ավտոմոբիլային բետոնածածկ ճանապարհների և արհեստական կառույցների ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման գործընթացի հստակեցում: 2019 թվականին նորոգվել և հիմնանորոգվել է 460 կմ ճանապարհ, որը նախկինում իրականացվում էր 3 տարում: 2020 թվականին պլանավորվել է այդ ցուցանիշը գերազանցել՝ հասնելով 500 կմ: 2020թ. բյուջեով ճանապարհաշինությանն ուղղվող ֆինանսավորումը 2017-ի համեմատ ավելացել է 64%-ով, 2018-ի համեմատ՝ 104%-ով, 2019-ի համեմատ՝ 91%-ով՝ կազմելով 110.2 մլրդ. դրամ:

Հայաստանն այն երկրների շարքում է, որ բնական ռեսուրսների սակավության, աշխարհագրական դիրքի, փոքր տարածքի, դեպի ծով ելքի բացակայության և այլ պատճառներով տնտեսական զարգացման համար պետք է էական ուշադրություն դարձնի նաև գիտության զարգացմանը, որի ցուցանիշները շարունակում են դեռևս մնալ մտահոգիչ: Մասնավորապես, եթե դիտարկում ենք հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում, ապա կարող ենք արձանագրել այն փաստը, որ պատկերը ՀՀ գիտության ոլորտում բավականաչափ մտահոգիչ է, քանի որ դեռևս ՀՀ գիտատեխնիկական գործունեության ոլորտում ներքին աղբյուրներից հետազոտությունների և մշակումների ֆինանսավորման կայուն բարձր չափաբաժիններ ապահովել հնարավոր չէ (տե՛ս 9.1 աղյուսակ):

Աղյուսակ 9.1

Գիտատեխնիկական աշխատանքների ծավալի և հետազոտությունների ու մշակումների վրա կատարված համախառն ծախսերի մասնաբաժինները ՀՆԱ-ի նկատմամբ, 2014-2018թթ.

	2014	2015	2016	2017	2018

Գիտատեխնիկական աշխատանքների ծավալը	0.24	0.25	0.24	0.22	0.18
Հետազոտությունների և մշակումների վրա կատարված համախառն ծախսերը	0.24	0.25	0.23	0.23	0.19

Նորարարություն:

Բարձր տեխնոլոգիաների զարգացումը Հայաստանի Հանրապետության ռազմավարական ուղղություններից մեկն է. դա է պատճառը, որ չնայած Կառավարության կառուցվածքի փոփոխությանը և օպտիմալացմանն, այնուամենայնիվ ստեղծվեց նոր՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը՝ ոլորտային խնդիրները կարգավորելու և Հայաստանը բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր դարձնելու առաքելությամբ:

Կառավարությունն իր առջև նպատակ է դրել արդիականացնել Հայաստանի տնտեսությունը՝ շեշտադրելով բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունը, զարգացնել ինովացիոն էկոհամակարգը՝ կապեր ու համագործակցության հնարավորություններ ստեղծելով միջազգային գործընկերների ու սփյուռքի հետ:

Նորարարությամաբ զբաղվող ընկերությունների թվաքանակի, շրջանառության, զբաղվածության տեսանկյունից հատկանշական է ստորև աղյուսակով (9.1) ներկայացնել 2015-2019 թվականների որոշ վիճակագրական ձեռքբերումներ:

Աղյուսակ 9.1

Ինտերնետ հասանելիության ծառայությունների ոլորտի ցուցանիշները և զարգացման միտումները

Ցուցանիշ	2015	2019	Աճ
Շրջանառություն	$117M	$308M	263%
Զբաղվածների թիվ	8,000	16,000	200%
Ընկերությունների թիվ	412	1,268	308%
Տարեկան վճարած հարկեր	$23M	$65M	279%
Արտահանում	>75%	>75%	-
Բարձր-տեխ/ՀՆԱ	1.1%	2.3%	209%
Արտահանում, բարձր-տեխ/ընդ.	5.9%	8.9%	151%
Շրջանառություն/մարդ	$15K	$19K	131%
Կանանց զբաղվածություն (%)	34%	38%	112%

Նոր լուծումների մշակմանը, ապրանքների ստեղծմանը, ծառայությունների մատուցմանը նպաստելու, ինչպես նաև մասնավոր հատվածում տեխնոլոգիաների ներդրումը, նորարարության զարգացումն ու առևտրայնացումը խթանելու նպատակով 2019թ. ՀՀ ԲՏԱ նախարարության կողմից ներդրվել է «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագիրը, որի առաջին փուլով դրամաշնորհներ են տրամադրվել նորարարներին, բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր գաղափարներ ունեցող սկսնակ թիմերին (startups), տեխնոլոգիական ոլորտի ձեռներեցներին՝ խոստումնալից նոր տեխնոլոգիաները, գաղափարները, նորարար լուծումները բացահայտելու և դրանց զարգացմանն աջակցելու համար: «Գաղափարից բիզնես» դրամաշնորհային ծրագրի մյուս փուլը կիրականացվի 2020 թ. վերջ, որի միջոցով ավելի քան 888 մլն. ՀՀ դրամ կներդրվի ՀՀ ինժեներական և ինովացիոն էկոհամակարգի զարգացման համար:

Հայաստանում ինժեներական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը նպաստելու նպատակով 2018 թվականին Կառավարությունը հաստատեց «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման հայեցակարգը:

«Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական բաղադրիչներից՝ ենթակառուցվածքային, որը կներառի ինժեներական բիզնես աքսելերատոր, համատեղ աշխատանքային տարածքներ, ինժեներական կենտրոն, ինժեներական քաղաքում տեղակայվելիք 35-40 ընկերությունների շենքեր և բովանդակային՝ լաբորատորիաներ, արհեստանոց, փոքր չափաքանակներով նմուշային արտադրության արտադրամաս (համատեղ օգտագործման լաբորատորիաներ), նորաստեղծ ընկերությունների ժամանակավոր ինկուբացիա, թրեյնինգներ և այլն (աքսելերացիոն ծրագիր) և

«Համակարգերի ճարտարագիտություն» բազային ամբիոն՝ իր ուսումնական ծրագրերով (Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կազմում):

2019 թվականի ընթացքում «Դրեյփեր Վենչուր Նեթվորկի» ընկերության հետ ձեռք բերված համաձայնության շնորհիվ ստարթափների և ձեռներեցների համար ստեղծվել է հնարավորություն մասնագիտական վերապատրաստման դասընթացներ անցնել Սիլիկոնյան Հովտի թոփ ձեռնարկատիրական՝ «Դրեյփերի Համալասարանում», որի միջոցով Հայաստանը հնարավորություն կստանա կապվել աշխարհի առաջատար տեխնոլոգիական կենտրոնների հետ՝ օգտագործելով Սփյուռքի ներուժը, որն էլ իր հերթին կստեղծի նոր կապեր հայ ձեռներեցների համար և համաշխարհային տեխնոհսկաների հետ գործակցության աշխարհագրությունն ու հնարավորություններն ընդլայնելու հնարավորություն:

2019 թվականի «UWC» միջազգային դպրոցում իրականացվել է «ՆերՈւժ» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափների ծրագիրը: 4-օրյա տևողությամբ ծրագրին մասնակցել են աշխարհի 17 երկրներից ընտրված 47 տեխնոլոգիական ստարտափ ընկերություն՝ 80 մասնակիցներով:

2019 թվականի հոկտեմբերին կազմակերպվել է Գլոբալ ինովացիոն երկրորդ համաժողովը, որը կոչված էր ուսումնասիրելու արհեստական բանականության ազդեցությունը գիտության և հասարակության վրա՝ գիտական, տեխնոլոգիական և արդյունաբերական տեսանկյունից:

15 տարի անընդմեջ անցկացվող «Դիջիթեք Էքսպո»-ն տարածաշրջանի ամենամեծ տեխնոլոգիական ցուցահանդեսն է: Այն ունի մոտ 80.000 այցելու: Ցուցահանդեսին մասնակցելու համար միջազգային պատվիրակություններ են Հայաստան ժամանում: ԴիջիԹեքը համախմբում և արտացոլում է Հայաստանի տեխնոլոգիական ներուժը, ձեռքբերումներն ու ապագան: Այստեղ այցելուները ծանոթանում են տեխնոլոգիական զարգացման գլոբալ միտումներին, իսկ ոլորտի ընկերությունները՝ մեծ, թե փոքր, փորձառու թե անփորձ, ցուցադրում են իրենց նորարական լուծումները:

2019թ. հոկտեմբերի 6-ից 9-ը Երևանում տեղի է ունեցել «Դիջիթեք Էքսպո 2019» ցուցահանդեսը, որտեղ ներկայացվել են հայկական ստարտափ 17 և ինժեներական 25 ընկերություններ:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտում արձանագրված հաջողությունների մասին խոսելիս անհնար է չնշել, որ 2019 թվականի հոկտեմբերին հենց Հայաստանում կազմակերպվեց Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը, որը աշխարհում հանդիսանում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խոշորագույն իրադարձությունը:

Միջոցառման շրջանակներում աշխարհի շուրջ 70 երկրից Հայաստան ժամանեցին ավելի քանի 2,500 մասնագետներ, ինչպես նաև 20 երկրներից նախարարական պատվիրակություններ: Միջոցման բարձր մակարդակի կազմակերպման շնորհիվ Հայաստանը հայտնվել էր աշխարհի ամենահեղինակավոր լրատվամիջոցներում՝ որպես բարձր տեխնոլոգիական երկիր :

2019 թվականի Հայաստանի Հանրապետության ինտերնետ հասանելիության դրական դինամիկան ներկայացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ որոշ վիճակագրական ցուցանիշների: Մասնավորապես 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ տարածք ներմուծված միջազգային «IP» հոսքերի թողունակությունը նախորդ տարվա համեմատ **աճել է 54.2 տոկոսով**, **1Մբիթ/վ** արագությամբ տարանցման հոսքի միջին շուկայական արժեքը նախորդ տարվա համեմատ **նվազել է 25 տոկոսով,** բաժանորդների թվաքանակը 2019 թվականին կազմել է **3 087 291 (համահունչ է Հայաստանի բնակչության թվին)**, որը նախորդ տարվա համեմատ **աճել է շուրջ 6.7 տոկոսով, ա**վելացել են նաև լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների թվաքանակը**:**

Գծապարկեր 9.1



Գծապարկեր 9.2



Գծապարկեր 9.3



ՀՀ բոլոր բնակավայրերում բարձր արագությամբ լայնաշերտ ինտերնետ կապ ապահովելու, Հանրապետության ողջ տարածքում քաղաքացիների և գործարար միջավայրի համար հասանելի հեռահաղորդակցական ցանցային ենթակառուցվածք ստեղծելու, ինչպես նաև հիմնական ենթակառուցվածքի հիման վրա հետագա հեռահաղորդակցական, գործարար, կրթական-գիտական, մշակութային և ժամանցային հնարավորությունները ընդլայնելու նպատակով Կառավարության ծրագրի համաձայն նախատեսվում է մշակել և մինչև 20.11.2020թ. ՀՀ Կառավարության քննարկմանը ներկայացնել ՀՀ տարածքում

ազգային լայնաշերտ, շարժական և ամրակցված գերարագ ինտերնետ կապի հասանելիության ռազմավարությունը:

ԿՁՆ 11 ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ՆԵՐԱՌԱԿԱՆ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ, ԱՆՎՏԱՆԳ ՈՒ ԿԱՅՈՒՆ

Երկրի տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունները սոցիալական ու տնտեսական զարգացման մակարդակների շեղումներն են, որոնք, որպես արդյունք, խոչընդոտում են տնտեսական աճն ու կայուն մարդկային զարգացումը ինչպես տարածքներում, այնպես էլ ամբողջ երկրում: Հայաստանի տարածքների բնակլիմայական առանձնահատկությունները, սպառնացող բնական և տեխնածին աղետները արտադրողական ուժերի ու բնական ռեսուրսների անհամաչափ բաշխումը, տնտեսական զարգացման, սոցիալական, ժողովրդագրական ու մշակութային տարբերությունները պայմանավորել են տարածքային միավորների զարգացման մակարդակների անհամաչափություններով: Տնտեսական զարգացումը հատկապես կենտրոնացել է Երևանում և որոշակի, խիստ սահմանափակ թվով մարզերում (հիմնականում՝ Սյունիք, Կոտայք), որպես արդյունք՝ առաջացնելով երկրի տարածքներում բնակչության կենսամակարդակի/աղքատության ու մարդկային զարգացման բնութագրիչների խիստ արտահայտված տարբերություններ:

ՀՀ տարածքային զարգացման առանձնահատկությունների ամփոփ վերլուծությունը վերհանում է հետևյալ մարտահրավերները, որոնք պայմանավորում են տարածքային զարգացման նպատակային քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը՝

- Տնտեսական զարգացման տարածքային անհամաչափությունների խորացում,
- Սոցիալական զարգացման ու կենսամակարդակի / աղքատության տարածքային անհամաչափությունների խորացում,
- Տարածքներում, հատկապես՝ գյուղական վայրերում, ենթակառուցվածքների և մատուցվող համայնքային ու հանրային ծառայությունների բարելավման, հասանելիության ու արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն,
- Տարածքային կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման, մասնավորապես՝ միջհամայնքային համագործակցության ընդլայնման և համայնքների խոշորացման անհրաժեշտություն,
- Աղետներին դիմակայելու համար համայնքների կարողությունների ոչ բավարար, խոցելիության բարձր մակարդակները,

- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացման անհրաժեշտությունը՝ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում,
- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման անհրաժեշտություն:

Նշված մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներից են ինչպես պետական, այնպես էլ, հատկապես, մասնավոր ներդրումների վերաուղղումը Երևանից դեպի ՀՀ տարածքներ՝ այլ քաղաքներ և գյուղական բնակավայրեր՝ նպատակ ունենալով խրախուսել ու նպաստել տարածքային "աճի բևեռների" ձևավորմանը: Միջազգային տարբեր գործընկերների օգնությամբ իրականացվում են տարբեր ծրագրեր, որոնք ուղղված են տնտեսական աճի խրախուսմանը ՀՀ տարածքներում, որոնք կնպաստեն կենսամակարդակի, զբաղվածության ու մարդկային զարգացման տարածքային անհամաչափությունների մեղմմանը, համայնքներում կձևավորվեն գործողությունների իրականացման տեղական խմբեր՝ համայնքի անդամների ներգրավվածությամբ իրենց համայնքների ռազմավարությունների մշակման գործընթացն առաջնորդելու և զարգացման ծրագրերի առաջնահերթությունները դասակարգելու համար:

Ձևավորված խմբերի միջոցով կվերհանվեն համայնքի տնտեսական խնդիրները, կմշակվեն ծրագրեր, և այդ ծրագրերի համար կտրամադրվի ֆինանսավորում. այդ թվում՝ և՛ բիզնես նախաձեռնությունների, և՛ փոքր ենթակառուցվածքային ծրագրերի համար: :

Քաղաքները համընդհանուր կերպով հասանելի ապահով, ներառական և մատչելի դարձնելու նպատակով մայրաքաղաքի վարչական շրջանների փողոցների խաչմերուկներում, բանուկ մասերում, հասարակական վայրերում և հանգստի գոտիներում կառուցվել են 2401 թեքահարթակներ և իրականացվել դրանց վերանորոգման աշխատանքներ: Տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար Երևան քաղաքի 32 հասցեներում տեղադրվել են դեղին գույնի գոգավոր սալիկներ:

Այս նպատակի շրջանակներում սահմանվել է, որ մինչև 2020 թ. պետք է էապես մեծացնել քաղաքների և մարդկային այլ բնակավայրերի թիվը, որոնք ընդունում և կենսագործում են ինտեգրված ռազմավարություն և պլաններ՝ ուղղված ներառմանը, ռեսուրսների արդյունավետությանը, կլիմայի փոփոխությունների մեղմացմանը և դրանց հարմարվելուն, աղետների նկատմամբ դիմակայունությանը, աղետների ռիսկերի ամբողջական

կառավարմանը բոլոր մակարդակներում՝ «Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030 թթ. գործողությունների ծրագրին» համահունչ կերպով: Այս թիրախի իրագործման նպատակով համաձայն Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին կառավարության որոշման և «Աղետների ռիսկի կառավարումը տեղական մակարդակում» կիրառական ուղեցույցի՝ 207 համայնքներում իրականացվել են սպառնացող վտանգների, համայնքի խոցելիության և կարողությունների բացահայտման գործընթացներ, ՀՀ ավելի քան 20 քաղաքներ միացել են ՄԱԿ-ի «Դարձնենք քաղաքները դիմակայուն» համաշխարային շարժմանը:

Քաղաքների և մարդկային այլ բնակավայրերում կլիմայի փոփոխությունը մեղմելու, ռեսուրսների կիրառման արդյունավետությունը բարձրացնելու և ավելի դիմակայուն դարձնելու համար ներկայումս ընթացքի մեջ են կլիմայի փոփոխության, վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության վերաբերյալ մի շարք ծրագրեր, այդ թվում նաև Կանաչ Կլիմայի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող՝ «Կանաչ քաղաքներ» և «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացման ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրերը: ՀՀ կողմից վավերացված միջազգային բնապահպանական կոնվենցիաներից 9-ում շրջակա միջավայրի նախարարությունը ներկայացված է բարձրագույն որոշում կայացնող մարմիններում: Առաջին անգամ Հայաստանը դարձել է Կանաչ կլիմայի հիմնադրամի խորհրդի անդամ:

ԿՈՌՈՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ և ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ (PEACE)

Ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության արդյունքում և դրանից հետո արդարադատության, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունների իրագործման արդյունքում միջազգային մակարդակում Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարության տեսանկյունից դարձել է միջազգային մամուլի ուշադրության կենտրոնում և վարկանիշավորման մի շարք ցուցանիշներում դրական արդյունք արձանագրող, երբեմն առաջատար դրական ցուցանիշ արձանագրող երկիր:

Հատկանշական է Հայստանի էական բարելավումը «Ժողովրդավարության համաթիվ 2019» զեկույցում, Կոռուպցիայի ընկալման համաթիվը 2020 զեկույցում,

որտեղ Հայաստանն էական բարելավում է արձանագրել: Ժողովրդավարական ինստիտուտների շարունակական կայացումը, մարդու իրավունքների անկաշկանդ իրացումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը դիտարկվող ժամանակահատվածում մշտապես գտնվել են Կառավարության գործունեության առանցքային թիրախում: Կառավարությունը որդեգրել է պետական կառավարման համակարգի, մարդու իրավունքների պաշտպանության, դատական և իրավական բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի, քրեակատարողական ոլորտների ռազմավարական պլանավորման գործընթացներ, որոնք հիմք են հանդիսանալու միջնաժամկետ հատվածում բարեփոխումների իրականացմանը:

Սակայն երկրում դեռևս առկա են անելիքներ իրավահավասարության ինստիտուցիոնալ մեխանիզմների, գենդերային հավասարության ապահովման, հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքի մեջ լիիրավ ինտեգրման երաշխիքների ստեղծման, նրանց զբաղվածության խնդրի լուծման ուղղութամբ, դատաիրավական և ոստիկանության բարեփոխումների, հանրային կառավարման բարեփոխումների նպատակով:

ԿՋՆ 5 ՀԱՍՆԵԼ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՈՐԱՅՆԵԼ ԲՈԼՈՐ ԿԱՆԱՆՑ ՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

Գենդերային բաշխմամբ վիճակագրությունը չափազանց կարևոր է պետության քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունների ու հավասար հնարավորությունների մոտեցումն արմատավորելու և երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավիճակն ըստ պատշաճի գնահատելու և արտացոլելու համար:

Ինչպես և արձանագրվել էր 2018 թվականի զեկույցում՝ չնայած զգալի ձեռքբերումներին՝ առկա են խնդիրներ նաև կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման տեսանկյունից:

1) 2018թ. կանանց և տղամարդկանց աշխատուժից դուրս բնակչության մակարդակների 1.7 անգամ տարբերությունը համարժեք է ոչ ակտիվության մակարդակում սեռային խզվածքի (ՍԽ) 40.8%-ին: ՍԽ-ն հատկապես բարձր է 25- 49 տարիքային խմբում (68.1%-73.0%)՝ հիմնականում պայմանավորված ընտանեկան պարտականություններով (հղիություն, ծննդաբերություն, երեխայի խնամք, տնային տնտեսությամբ ծանրաբեռնվածություն և այլն) կանանց

զբաղվածությամբ: Հակառակ դրան՝ 15-24 տարիքային խմբում ՍԽ-ի 8.9% ցուցանիշը պայմանավորված է կրթության մեջ երիտասարդների զանգվածային ընդգրկվածությամբ՝ անկախ սեռից:

2) 2018 թվականին 15-75 տարեկան կանանց 53%-ը չի ունեցել աշխատանք և չի փնտրել՝ հիմնականում զբաղված լինելով տնային տնտեսությամբ:
3) Հայաստանի Հանրապետության աշխատանքային շուկայում աշխատուժի մասնակցության մակարդակն ավելի բարձր է տղամարդկանց, քան կանանց շրջանում: 15-75 տարեկան արական սեռի բնակչության 68.8%-ը և իգական սեռի բնակչության 47.2%-ը զբաղված է կամ փնտրում է աշխատանք:
4) Ղեկավար պաշտոն զբաղեցրած տղամարդիկ գերազանցում են կանանց 2.8 անգամ:
5) Միջին աշխատավարձի սեռային խզվածքը կազմել է 35.3 %. 2018թ.-ին 2017-ի նկատմամբ կանանց և տղամարդկանց միջին ամսական անվանական աշխատավարձերի (վաստակների) տարբերությունը կրճատվել է 8.3%-ային կետով: 2018թ. ՀՀ-ում կանանց միջին վաստակը կազմել է տղամարդկանց վաստակի 64.7%-ը կամ վարձատրության սեռային խզվածքը կազմել է 35.3%:
6) Թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ հիմնականում վարձու աշխատողներ են: Գործատուների և ինքնազբաղվածների մեծամասնությունը տղամարդիկ են, մինչդեռ առանց վարձատրության աշխատողների մեջ կանայք կրկնակի անգամ գերազանցում են տղամարդկանց:
7) գյուղատնտեսության ոլորտում զբաղված է հանրապետության զբաղվածների 31.3%-ը, որոնց թվում կանայք կազմում են 52.9%, ինչը նրանց դարձնում է գյուղատնտեսության զարգացման առավել կարևոր մասնակից, ոչ ֆորմալ զբաղվածության պարագայում նրանք զրկված են սոցիալական երաշխիքներից:

8) կանայք քիչ չեն մասնակցում իրենց համայնքներին վերաբերող որոշումների կայացմանը (համայնքի ղեկավար 1.6%, ավագանու անդամ 10.1%):2

Գենդերային հավասարության հաստատումը և կանանց ու աղջիկների հզորացումը մշտապես գտնվում է ՀՀ կառավարության և քաղաքացիական հասարակության ուշադրության կենտրոնում: Շարունակելով խթանել կանանց

[2] «Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2019» վիճակագրական գրքույկ.

կարողությունների ընդլայնումն ու լիարժեք կիրառումը՝ հատկանշական է նշել 2018-2019 թվականների ձեռքբերումները.

- 2018 թվականին Հայաստանի Հանրապետությունը դարձել է ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի անդամ՝ վերահաստատելով կանանց հավասարության, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կանանց հնարավորությունների և դերակատարության ամրապնդմանն ուղղված միջազգային ջանքերին աջակցելու և հանձնաժողովի ամենամյա աշխատանքներին ազգային ներդրումը բերելու հանձնառությունը:
- 2019 թվականի մարտին ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչն ընտրվեց ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի նախագահ՝ 2020-2021 թվականներին կայանալիք 64-րդ և 65-րդ նստաշրջանների համար:
- 2019 թվականի փետրվարին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019-2023 թվականների ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը՝ ուշադրության կենտրոնում պահելով սահմանամերձ համայնքներում կանանց տնտեսական և սոցիալական զարգացման խնդիրները, տեղահանված կանանց և աղջիկների հատուկ պաշտպանվածության ապահովման հարցերը:
- 2019 թվականի հունիսի 7-ին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստան համահայկական հիմնադրամի և Կանանց աջակցման կենտրոնի միջև՝ ընտանեկան բռնության երևույթի կանխարգելման և մեթոդական աջակցության նպատակով, ինչի շրջանակում նախատեսվել է համալիր համագործակցություն մարզերում ընտանեկան բռնության ենթարկված անձանց որակյալ աջակցություն ցուցաբերելու հարցերում:
- 2020 թվականից բոլոր մարզերում գործում են ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոններ, որտեղ ընտանիքում բռնության ենթարկված շուրջ 1800 անձ՝ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, անհրաժեշտության դեպքում ստանանում են անհրաժեշտ ծառայությունները, ինչպես նաև գործում է պետական ֆինանսավորմամբ 2 ապաստարան, որտեղ ընտանիքում բռնության ենթարկված շուրջ 60 անձանց,

անհրաժեշտության դեպքում՝ նրանց խնամքի տակ գտնվող երեխաներին տրամադրվում են օրենքով սահմանված սոցիալական ծառայությունները:

- 2019 թվականին ՀՀ կառավարության հաստատել է Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը , որը սահմանում է գենդերային քաղաքականության առաջնահերթ ուղղությունները և ուղղված է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները:
- 2019 թվականին փոխվարչապետի գլխավորությամբ ստեղծվել է ՀՀ վարչապետին կից կանանց հարցերով խորհուրդը՝ որպես գենդերային քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ և ազգային մեխանիզմ:
- 2019 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՄԺԾԾ և 2020 թվականի բյուջետային հայտում ավելացվել են գենդերային զգայուն բյուջետավորման տարրեր և ցուցանիշներ, իսկ 2020 թվականին գենդերազգայուն ցուցանիշներ են ավելացվել ՀՀ պետական գերատեսչությունների բյուջետային ծրագրերում:
- 2019 թվականին հաստատվել է «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, որով 2020 թվականի հունվարի 1-ից նախատեսվել է ընտանիքում բռնության ենթարկված անձանց տրամադրել ֆինանսական աջակցություն:
- 2019 թվականին ընդունվել է «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որի համաձայն 2020 թվականին Հայաստանում առաջին անգամ կիրականացվի ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում, որը կներառի ոչ միայն դեպքերի ճշգրիտ թիվը, այլև հստակ պատկեր կտա բռնության տեսակների և դրանց գրանցման տարածքային բաշխվածության վերաբերյալ:

- 2018-2019թթ. ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է ապահովել յուրաքանչյուր անձի և քաղաքացու նկատմամբ հավասար վերաբերմունք, նրանց իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրականացման հավասար հնարավորություններ՝ առանց խտրականության: Այս օրենքը սահմանում է խտրականության հասկացությունը և տեսակները, իրավահավասարության ապահովման սուբյեկտները և կառուցակարգերը, ինչպես նաև Իրավահավասարության խորհրդի կարգավիճակը, խնդիրները և գործունեության սկզբունքները: «Իրավահավասարության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանին վերապահվելու է իրավահավասարության ոլորտում մարդու իրավունքների պահպանության և խտրականությունից տուժած անձանց իրավունքների վերականգնման նոր գործառույթ: Ընդ որում, Պաշտպանի մանդատն այս ոլորտում ընդլայնվելու է՝ ներառելով ոչ միայն պետական, այլ մասնավոր կազմակերպությունների դեմ բողոքների քննարկումը:
- 2018-2019 թվականների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ իրականացրել է «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար» ծրագիր, որի շրջանակում հրապարակել է ուղեցույց և տեղեկատվական տեսանյութ ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների վերաբերյալ, մշակվել է ընտանեկան բռնության կանխարգելման վերաբերյալ առցանց դասընթաց և իրականացվել են թվով 24 աշխատանքային քննարկումներ մարդու իրավունքների, այդ թվում՝ կանանց իրավունքների, ընտանեկան բռնության կանխարգելման վերաբերյալ:

Կանանց դերակատարությունը քաղաքական կյանքում ևս կարևոր ցուցանիշ է կանանց և տղամարդկանց հավասարության գնահատման համար: Հայաստանում հայ կանայք ընտրելու և ընտրվելու իրավունք ունեցել են դեռևս 1919-ից, երբ խորհրդարանական առաջին ընտրություններում ընտրվել են երեք կին պատգամավորներ խորհրդարանի 80 տեղերից: Դեռևս այդ ժամանակ,

ԱՄՆ-ում Սահմանադրության 19-րդ փոփոխության շնորհիվ կանայք առաջին անգամ ստացան ընտրելու իրավունք:

2018 թվականի դեկտեմբերին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններում կանանց մասնաբաժնով առաջընթաց է գրանցվել թե թեկնածուների թվով և թե ընտրված պատգամավորների թվով: 2018 դեկտեմբերի Խորհրդարանի ընտրություններին կանանց մասնակցությունը գերազանցում եր օրենսդրական քվոտավորման շեմը՝25%-ը և կազմում էր 32 տոկոս:

Գծապատկեր 5.1



Համայնքների ավագանիների անդամների ընդհանուր թիվն է 3849, որից 389-ը կանայք են: Հայաստանում առկա թվով 502 համայնքների ղեկավարներից 8-ը կանայք են: Բացի այդ, միավորված համայնքների թվով 24 բնակավայրերի վարչական ղեկավարները կանայք են: Առաջին կին քաղաքապետն ընտրվեց 2018 թվականի հոկտեմբերին, ինչը կարևոր ձեռքբերում էր տեղական իշխանության համակարգում կանանց դերի բարձրացման հարցում:

Գործադիր իշխանության ղեկավար պաշտոններում ևս կանանց թվի կայուն աճ է գրանցվում, բացառությամբ 2018 թվականի Սակայն հարկ է ընդգծել, որ 2018 թվականից ի վեր, չնայած Կառավարության կառուցվածքում 2020 թվականի ապրիլ ամսվա դրությամբ 12 նախարարներից միայն 1-ն է կին, բայց առաջընթաց է արձանագրվել կին փոխնախարարների մասով (շուրջ 10): Կանանց ներգրավվածությունը հանրային կյանքի բոլոր ոլորտներում մեծացնելու մասին է վկայում նաև ոստիկանության բաժինների և բաժանմունքների պաշտոններում կանանց նշանակումները:

Գծապարկետ 5.2



Գծապատկեր 5.3



2020թ. “Global gender gap” զեկույցում 153 երկրների շարքում Հայաստանը 0.684 միավորով զբաղեցնում է 98-րդ տեղը, ինչը նշանակում է, որ 2018թ. զեկույցի համեմատ (2019թ. գնահատում չի իրականացվել) դիրքային փոփոխություն տեղի չի ունեցել, բայց 0.006-ով բարձրացել է տրված միավորը: Հայաստանին ամենաբարձր միավորները տրվել են կրթական ցենզի (0.998) և առողջապահության (0.948), իսկ ամենացածրը՝ քաղաքական ներգրավվածության (0.118) մասով: Ըստ զեկույցի՝ մտահոգիչ է այն հանգամանքը, որ 153 երկրների շարքում ՀՀ-ն զբաղեցնում է 150-րդ հորիզոնականը՝ ծնելիության ժամանակ սեռերի հարաբերակցության ենթացուցիչում: Հետևաբար նշված ԿԶՆ-ի իրականացման ուղղությամբ դեռևս առկա են մարտահրավերներ, որոնք ենթակա են հաղթահարման առաջիկա ժամանակահատվածում:

ԿԶՆ 10 ԿՐՃԱՏԵԼ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԻՋԵՎ

Անհավասարության կրճատումը Հայաստանում դիտարկվում է Կառավարության թիրախներից և խոցելի խմբերի համար բոլոր ոլորտներում հավասար պայմանների ապահովումը շարունակում է լինել մարտահրավեր Հայաստանի համար:

31.12.2019 դրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 192014, որից 8623-ը՝ հաշմանդամություն ունեցող երեխա: Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 3554 անձով: 2019 թ. ընթացքում առաջին անգամ փորձաքննվել է 16227 անձ (նախորդ տարվա համեմատ աճել է 4237-ով), վերափորձաքննվել է 32897 անձ (նախորդ տարվա համեմատ նվազել է 3792-ով):

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ու ազատությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ, հասարակական կյանքում նրանց հավասար մասնակցությունը և արդյունավետ սոցիալական ներառումն ապահովելու նպատակով 2019 թվականին նոր խմբագրությամբ մշակվել և ներկայումս շրջանառվում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծով ամրագրվել են խտրականության արգելքի, անկախ կյանքի և համայնքում ներառման իրավունքի իրացման, խելամիտ հարմարեցումների, մատչելիության և հանընդհանուր դիզայնի դրույթները:

Միաժամանակ, մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը նպատակ ունի ներդնել հաշմանդամություն ունեցող անձանց ֆունկցիոնալության գնահատման համակարգ և ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց ֆունկցիոնալության գնահատման հիման վրա ծառայությունների մատուցման իրավական հիմքեր: Անձի ֆունկցիոնալության գնահատման մոդելի նպատակն է գնահատել հաշմանդամություն ունեցող անձանց ֆունկցիոնալության աստիճանի, գործունեության ու մասնակցության, միջավայրային գործոնների ունեցած ազդեցությունը և որոշել յուրաքանչյուր անձի անհատական ծառայությունների փաթեթը:

Մշակվում է «Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների փոխակերպման 2020-2024 թվականների միջոցառումների ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Սույն նախագծի նպատակն է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց, անկախ կյանքի իրավունքը և խնամքի շուրջօրյա հաստատություններում ապրող անձանց համար այլընտրանքային՝ համայնքահենք ծառայությունների մատուցումը՝ կանխարգելելով հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը խնամքի շուրջօրյա մեծ հաստատություններ: Այդ ծառայությունները պետք է հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա հաշմանդամության տեսակից, բնակության վայրից, սեռից և այլն:

Մշակվել են մի շարք իրավական ակտերի նախագծեր՝ կապված տարեցների խնամքը խնամատար ընտանիքում կազմակերպելու, ընտանիքում տարեց հիվանդ անդամ ունեցող ընտանիքին սոցիալական աջակցություն ցուցաբերելու, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ տրամադրելու և այլնի հետ:

ԿԶՆ 16 ԽԹԱՆԵԼ ԽԱՂԱՂ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ՝ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ, ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՐՁՆԵԼ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈԼՈՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ, ՀԱՇՎԵՏՈՒ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժողովրդավարական և իրավական պետության առջև դրված կարևորագույն խնդիր է օրենքի գերակայության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորումը, ապահովումը և պաշտպանությունը, ժողովրդավարական հաստատությունների ամրապնդումը:

Նախորդ 2 տարիներին ՀՀ կառավարության գործունեությունն ուղղված է եղել այդ նպատակների կենսագործմանը:

Մասնավորապես, մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության համար հանդիսանում է այն նպատակը, որի իրականացմանը պետք է ուղղված լինեն հանրային իշխանության բոլոր մարմինների համատեղ ջանքերը: Այս տեսանկյունից իրավունքահենք քաղաքականության ձևավորման

համար կարևոր նշանակություն ունի հանրային իշխանության մարմինների կողմից ռազմավարական պլանավորումը և հստակ գործողությունների նախատեսումը:

2018 թվականին ձևավորված Կառավարությունը որպես կարևորագույն առաջնահերթություն հռչակեց մարդու իրավունքների երաշխավորման և պաշտպանության ինստիտուցիոնալ և համակարգված քաղաքականության մշակումն ու իրականացումը: Այս համատեքստում, ՀՀ կառավարությունը 2019թ. դեկտեմբերին հաստատեց Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը: Այն հասցեագրում է մարդու իրավունքների պաշտպանության հետևյալ ուղղությունները՝ կյանքի իրավունք, խոշտանգումների արգելք, արդար դատաքննության իրավունք, հավաքների և տեղեկատվության ազատություն, առողջության իրավունք, աշխատանքային իրավունք, կրթության իրավունք, սեփականության իրավունք, երեխայի և կանանց իրավունքների պաշտպանության ապահովում, խտրականության արգելք, երեխաների իրավունքների պաշտպանություն:

Այս համատեքստում, կարելի է առանձնացնել Գործողությունների ծրագրի հետևյալ ուղղությունները՝

1. Իրավահավասարության ինստիտուցիոնալ մեխանիզմների և իրավունքների պաշտպանության ապահովում,
2. Գենդերային բռնության կանխարգելում և տուժողների իրավունքների արդյունավետ պաշտպանություն, մարդու իրավունքների կրթություն,
3. Հաշմանդամություն ունեցող անձանց, փակ և կիսափակ հաստատության շահառուների, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ,
4. Անչափահասների համար մատչելի արդարադատության համակարգերի ստեղծում և զարգացում՝ ներառյալ նրանց խնդիրների հաշվառման և վարման միասնական վիճակագրական համակարգի ստեղծմամբ,
5. Ատելության խոսքից իրավունքների պաշտպանության գործուն և համաչափ մեխանիզմների ներդրում՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

2018թ. Թավշյա հեղափոխությունից հետո ՀՀ կառավարությունն իր առաջնային խնդիրներից մեկը հռչակեց արդարադատության ոլորտի բարեփոխումները՝ շեշտադրելով թե՛ դատաիրավական ոլորտը, թե՛ հակակոռուպցիոն համապարփակ փոփոխությունների հրատապությունը:

Այս համատեքստում 2019թ. հոկտեմբերին ՀՀ կառավարությունը հաստատեց Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունն ու դրանից բխող գործողությունների ծրագրերը 2019-2023թթ համար: Գործողությունների առանձին ծրագիր նախատեսվեց էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման ու զարգացման համար:

Ռազմավարության առաջնային ուղղություններն են.

1. Հզորացնել արդարադատության համակարգի անկախությունը, բարեվարքությունն ու հաշվետվողականությունը,
2. Էլեկտրոնային գործիքների արդյունավետ կիրառման միջոցով կրճատել դատական քննության ժամկետներն ու կրճատել դատավարական ծախսերը,
3. Բարելավել ու ընդլայնել արդարադատության ոլորտում հանրային ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունն ու ոլորտի շահառուների իրազեկումը, ինչպես նաև անձանց կարիքները բավարարող ծառայությունների մատուցումը:

ՀՀ Կառավարության գործունեության հիմնարար ուղենիշներ սահմանվել են կոռուպցիայի դեմ առավել թիրախավորված և ինստիտուցիոնալ պայքար մղելը, կոռուպցիայի հանրային մերժումը և կոռուպցիայից զերծ հասարակության կառուցումը: 2019 թվականի հոկտեմբերին Կառավարության կողմից հաստատվել է հակակոռուպցիոն բարեփոխումների ծրագիրն ու դրանից բխող 2019-2022թթ-ի գործողությունների ծրագիրը:

Հակակոռուպցիոն ռազմավարությունն ուղղված է հանրային կառավարման համակարգում բարեվարքության, թափանցիկության, մասնակցայնության արդյունավետ և իրագործելի կառուցակարգերի ստեղծմանն ու կատարելագործմանը, պետական համակարգում կոռուպցիայի հակազդմանն ուղղված միասնական կանոնների թելադրմանը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մոդելի ներդրմանը:

Ռազմավարական մոտեցումներից բացի, հատկանշական է ընդգծել, որ Հայաստանը բարելավել է իր դիրքերը նաև Կոռուպցիայի ընկալման համաթվով, 2019-ին՝ նախորդ տարվա համեմատ 105-ից գրավելով 77-րդ տեղը: Նշենք որ հայաստանցիների 90 տոկոսը կոռուպցիան համարում է լուրջ հիմնախնդիր, ինչի մասին է վկայում «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի հարցումը, որն իրականացվել է 2019-ի հոկտեմբերից դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում՝ 1500 քաղաքացու շրջանում:

Նշենք նաև, որ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության տվյալներով կատարված վերլուծությունը փաստում է, որ 2018թ. համեմատ 2019թ. 95-ով կամ 4,7%-ով աճել

է կոռուպցիոն բնույթի դեպքերով ՀՀ իրավասու մարմինների վարույթում նախապատրաստված նյութերի քանակը՝ կազմելով 2083, որին հակառակ, նույն՝ 4,7%-ով կամ 70-ով նվազել է հարուցված քրեական գործերի քանակը՝ կազմելով 1399: Հաշվետու ժամանակաշրջանում կոռուպցիոն և այլ բնույթի քրեական գործերով անցնում են նախկին նախագահներ, նախարարներ, փոխնախարարներ և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Արդարադատության և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը չի շրջանցել նաև ներկայիս Կառավարության գործող կամ արդեն նախկին պաշտոնյաներին:

Մարդու իրավունքների անկաշկանդ իրացման կարևոր գրավականը Կառավարության և իրավապահ համակարգի նկատմամբ հանրային վստահության ամրապնդումն է, ինչը դրսևորվել է քաղաքացիների՝ նախկինում քողարկված խնդիրների, իրավախախտումների և հանցագործությունների մատնանշմամբ և բարձրաձայնմամբ: Այս ցուցանիշները փաստում են, որ շարունակվում է բարձր մնալ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման հարցում իրավապահ մարմիններին ցուցաբերվող հանրային աջակցության և վստահության մակարակը: Դրան զուգահեռ, էականորեն ավելացել են կոռուպցիոն հնարավոր դրսևորումների վերաբերյալ ԶԼՄ-ների հաղորդումների, ինչպես նաև հակակոռուպցիոն պայքարում իրավապահ մարմինների նախաձեռնողականության ակտիվությունը: Մասնավորապես՝ եթե 2018թ. ԶԼՄ-ների նմանատիպ 25 հրապարակման էր ընթացք տրվել, ապա 2019թ.՝ 47, կամ 88%-ով ավելի: Եթե 2018թ. արձանագրվել էր հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործությունների մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերման 532 դեպք, ապա 2019թ՝ 1020, կամ շուրջ 92%-ով ավելի:

Աննախադեպ արդյունքներ են արձանագրվել հանցագործություններով պետությանը պատճառված վնասի բացահայտման և վերականգնման առումով: Մասնավորապես, նշված ժամանակահատվածում քննված քրեական գործերով, որոնց ճնշող մեծամասնությունը՝ կոռուպցիոն բնույթի գործերն են, հանցագործությամբ պետությանը կամ համայնքներին պատճառված վնասը նախնական հաշվարկով (նկատի ունենալով, որ քննության ընթացքում գտնվող գործերով կարող է փոփոխվել) կազմել է շուրջ 105.7մլրդ ՀՀ դրամ՝ 2018թ. արձանագրված շուրջ 85 մլրդ դրամի դիմաց: Վերականգնվել է 12.4 մլրդ ՀՀ դրամի վնաս:

Հատկանշական է, որ 2018-2019թթ քննված քրեական գործերի շրջանակներում բացահայտված՝ պետությանը կամ համայնքներին պատճառված ընդհանուր վնասի չափը՝ 190.7մլրդ դրամ, ավելի քան 5.2 անգամ գերազանում է

2009-2017թթ. հայտնաբերված վնասի չափը միասն վերցրած, որը կազմում է 36.5մլրդ դրամ: Իսկ վերականգնված վնասը՝ 40.2մլրդ դրամ, նախորդող 9 տարիների ընդհանուր արդյունքը գերազանցում է 19 մլրդ դրամով կամ շուրջ 90%-ով:

2020թ. ապրիլի 23-ին Կառավարությունը հաստատել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը, որի նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված ու տեխնիկապես հագեցած, բարեվարք և հարգանքի արժանի ոստիկանության վերափոխումն ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծումն է, նոր պարեկային ծառայության ու միասնական օպերատիվ կառավարման կենտրոնի գործարկումը:

Բոլոր մակարդակներում արդյունավետ, հաշվետու և ներառական ինստիտուտների ստեղծման նպատակով հատկանշական է արձանագրել 2018-2019 թվականներին իրականացված Հանրային կառավարման բարեփոխումների ամբողջական գնահատման վերլուծությունը, որն իրականացվել է հանրային կառավարման հեղինակավոր փորձագիտական նախաձեռնության՝ SIGMA-ի կողմից: Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման համակարգը գնահատվել է 6 առանցքային հիմնասյուներով (Ռազմավարական շրջանակ, Քաղաքականության մշակում և համակարգում, Հանրային ծառայություն և մարդկային ռեսուրսների կառավարում, Հաշվետվողականություն, Ծառայությունների մատուցում, Հանրային ֆինանսների կառավարում) և արձանագրվել է դրական առաջընթացը և մատնանշվել թերությունները: Այս վերլուծության հիման վրա մշակվել է նաև Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, որով նախատեսվում է անդրադառնալ մատնանշված թերություններին և ապահովել առավել արդյունավետ հանրային կառավարման համակարգ:

ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ (PLANET)

Դիտարկվող ժամանակահատվածում շրջակա միջավայրի կառավարման և կլիմայի փոփոխության քաղաքականության առանցքն են եղել շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությունն ու վերականգնումը: Շրջակա միջավայրի կառավարման ոլորտում 2019 թվականի ընթացքում գլոբալ և տարածաշրջանային միջազգային կառույցների,

օտարերկրյա պետությունների հետ, ինչպես նաև միջազգային կոնվենցիաների և նախաձեռնությունների շրջանակներում իրականացվել է լայնածավալ գործընթաց: Բնության հատուկ պահպանվող տարածքներում 2019 թվականի ընթացքում իրականացվել են անտառավերականգնման աշխատանքներ, իրականացվել են տեխնիկական վերազինման և սարքավորումների հագեցման գործընթացներ:

2019 թվականին Ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքների շրջանակում իրականացվել են խորքային հորերի լուծարման և կոնսերվացման, ջրակորուստների նվազման աշխատանքներ:

Սակայն ոլորտում առկա են դեռևս մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես՝ հանքարդյունաբերության մեծ տեսակարար կշիռը, անտառահատումները և վարելահողերի կրճատված տարածքը, պոչամբարների ռիսկերը:

ԿԶՆ 6 ԱՊԱՀՈՎԵԼ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՁԵՎՈՎ ԿԱՌԱՎԱՐԵԼ ՋՈՒՐՆ ՈՒ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Նկատի ունենալով, որ տնտեսության շատ ճյուղեր մեծապես կախված են ջրային ռեսուրսներից, առանձնակի կարևորվում է ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը: Չնայած վերականգնվող քաղցրահամ ջրային ռեսուրսները ջրային ռեսուրսների հաշվեկշռում ուղղակիորեն չեն ընդգծում ջրի դեֆիցիտ, այնուամենայնիվ տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում, մասնավորապես գյուղատնտեսության ոլորտում, ջրառի և ջրօգտագործման բարձր մակարդակներն առանձին տարիներին մեծ ճնշում են գործադրում երկրի վերականգնվող քաղցրահամ ջրային ռեսուրսների վրա:

Քաղցրահամ ջրերի ընդհանուր օգտագործման 86%-ը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը և ձկնաբուծությանը, որի ավելի քան 70%-ը բաժին է ընկնում ոռոգմանը: Ջրառի և ջրօգտագործման մեծ ծավալները հատկապես գյուղատնտեսության ոլորտում հանգեցրել են ջրի սթրեսի և առաջ են բերել բնապահպանական հիմնախնդիրներ:

Հայաստանը սակավաջուր երկիր չէ, այնուամենայնիվ, այն բախվում է ջրի սթրեսի խիստ պայմանների կենտրոնացված ջրամատակարարման (61%) և գյուղատնտեսության (34%) բարձր պահանջների պատճառով (2018թ. ջրի սթրեսը կազմել է 54.8%): 2018թ. երկու ոլորտներում ընդհանուր ջրառը կազմել է երկրի տարեկան քաղցրահամ ջրերի ջրառի 95%-ը: Այնուամենայնիվ, ջրերի ոչ բավարար կառավարման պատճառով Հայաստանը երկար ժամանակ կանգնած է

ջրի սթրեսի ծանր պայմանների առաջ: 2018թ. ջրի շահագործման ինդեքսը կազմել է 34.9%: Դա նշանակում է, որ Հայաստանի վերականգնվող քաղցրահամ ջրերի ռեսուրսների գրեթե կեսը (41.3%) ենթարկվել է ջրառի՝ հասարակության և տնտեսության ջրային պահանջները բավարարելու համար:

Ջրի սթրեսը և շահագործման ինդեքսը, 2015-2018թթ.



Սևանա լիճը կարևոր դեր է խաղում ջրի պահանջարկի բավարարման հարցում, մասնավորապես Արարատյան դաշտի կարիքների համար, ինչը բացասական ազդեցություն է ունենում լճի էկոլոգիական և հիդրոլոգիական պայմանների վրա: 2018թ. տարեվերջին Սևանա լճի մակարդակը բարձրացել և հասել է ծովի մակարդակից 1900.4 մ բարձրության, ծավալը կազմել է 38.0 մլրդ. մ^3, մակերեսը՝ 1277.5 կմ^2, առավելագույն խորությունը՝ 83.5 մ:

Հայաստանի կառավարությունը հանձն է առել խորացնել ջրային ոլորտի բարեփոխումները, համախմբելով հասարակական և մասնավոր հատվածի ջանքերը՝ ուղղված ծառայության բարելավմանը և ջրի առկայության ու մատչելիության առումով գյուղական ու քաղաքային շրջանների միջև եղած անհավասարությունների վերացմանը:

2019 թվականին ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքների շրջանակում Արարատի և Արմավիրի մարզերում իրականացվել են 8 խորքային հորի լուծարման և 43-ի կոնսերվացման աշխատանքներ: Ջրօգտագործողների միջոցների հաշվին կոնսերվացվել է ևս 28 խորքային հոր: Փականային ռեժիմի է բերվել 20 խորքային հոր: Խնայվել է 3017.8լ/վրկ ջրաքանակ: Ջրային օրենսգրքի փոփոխության հիման վրա արդեն իսկ մշակվել է և մինչև 2020

թվականի տարեվերջ կսահմանվի այն գետերի ցանկը, որոնց վրա կարգելվի ՀԷԿ-երի կառուցումը:

2019 թվականին Սևանա լճից իրականացված ջրառը նվազագույնն է վերջին 5 տարիների ընթացքում. օրենսդրությամբ նախատեսված չափաքանակից (170 մլն մ3) ջրի բացթողումը պակաս է եղել 26,140 մլն խմ-ով, Սևանա լիճ է բաց թողնվել իշխանի 11 հազար ամառային ենթատեսակի 22.5 գրամ միջին զանգվածով և 40 հազար գեղարքունի ենթատեսակի 3.5 գրամ միջին զանգվածով մանրաձուկ: Առաջին անգամ մեկնարկել է կողակի պոպուլյացիայի վերականգնման ծրագիրը և ժամանակակից մեթոդներով իրականացվել է մինչև 1901,5 մ ծովի մակերևույթից բարձր առափնյա տարածքների մանրամասն ուսումնասիրություն և գնահատում:

«Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» 2019թվականի ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել են համապատասխան միջոցառումներ, որոնք նորագույն ջրախնայող տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ հնարավորություն կտան նվազագույնի հասցնել ջրօգտագործման ծավալները, նվազեցնել ջրակորուստները, կօժանդակեն ջրային ռեսուրսների պահպանությանը, դեգրադացված էկոհամակարգերի վերականգնմանը, ջրային ռեսուրսների շարունակական և արդյունավետ օգտագործմանը, կայուն կառավարման ապահովմանը: **Տարբեր իրավական ակտերի փոփոխությամբ** ամրագրվել է «ռեկրեացիոն գոտիներ» հասկացությունը, ստեղծվել է իրավական հիմք ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջների սահմանման համար, ամրագրվել են ՓՀԷԿ-երի կառուցման համար արգելված գոտիները:

Մշակման փուլում է Ախուրյանի, Հրազդանի և Սևանի ջրավազանային կառավարման տարածքներում գտնվող գետային և լճային էկոհամակարգի պահպանման չափորոշիչները:

Համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպության սպասարկման տարածքում բարելավվել է ջրաչափության մակարդակը, բաժանորդների մոտ տեղադրված են 890884 հատ ջրաչափական սարք, որը 2018թ. համեմատությամբ ավելին է 7752 հատով: Ջրաչափությունը կազմում է 99,5 տոկոս: 2019թ. ՀՀ մարզերում ընկերությունն իրականացրել է Այն համայնքներում, որոնք ունեն ջրամատակարարման խնդիրներ, պետական բյուջեի և համայնքների համաֆինանսավորմամբ և դոնոր կազմակերպությունների միջոցով իրականացվում են տարբեր ծրագրեր՝ ջրամատակարարման խնդիրը լուծելու համար:

ԿԶՆ 12 ԱՊԱՀՈՎԵԼ ՍՊԱՌՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ՄՈԴԵԼՆԵՐ

Միջազգային փորձը վկայում է, որ տնտեսության մյուս ճյուղերի զարգացումը և գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը որպես կանոն հանգեցնում են տնտեսավարող սուբյեկտների թվաքանակի կրճատման, մեկ տնտեսության հաշվով հողատարածության մեծացման և ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման՝ զբաղվածների թվի նվազեցման: Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում այս օրինաչափությունները դեռևս ցայտուն դրսևորումներ չունեն: Ուստի ագրարային ոլորտում կարևորվում է տնտեսվարման բազմաձևության և կամավորության սկզբունքով կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը: Ներկա էտապում փոքր հողակտորների վրա արդյունավետ տնտեսավարմանը պետք է նպաստեն ճյուղի սպասարկող ծառայությունների և շուկայական ենթակառուցվածքների ընդլայնումն ու մրցունակության բարձրացումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետևողականորեն իրականացնելու է գյուղական ենթակառուցվածքների զարգացման, ոռոգման համակարգերի կատարելագործման, հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, արոտավայրերի ջրարբիացման, հակակարկտային պաշտպանության դիվերսիֆիկացված համակարգերի ներդրման, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ կենտրոնացված պայքարի :

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետ կազմակերպմանը լրջորեն խոչընդոտում է գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը: Ներկայումս մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.48 *(Համաձայն 2014թ. ՀՀ-ում իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) տվյալների)* հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ ~~1.1~~ 1.0 հա վարելահող: Հարկ է նշել, որ ՀՀ-ում մինչև 0.5 հա գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող տնտեսությունների քանակը կազմում է ընդամենը անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների շուրջ 42 %-ը, իսկ մինչև 1 հա գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող տնտեսությունների քանակը կազմում է ընդամենը տնտեսությունների շուրջ 60 %-ը: Համաձայն ԳՀՀ տվյալների ՀՀ-ում տնտեսությունների շուրջ 42 %-ը տնօրինում է գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 5 %-ը, իսկ տնտեսությունների շուրջ 60 %-ը՝ հողերի շուրջ 15 %-ը: Վերը նշվածը վկայում է ՀՀ-ում անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների փոքր չափերի մասին, որը հնարավորություն չի ընձեռում իրականացնել արդյունավետ տնտեսավարում և ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառում:

Պարենային անվտանգության ապահովումը կարևորվում է ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ընդունված բազմաթիվ իրավական ակտերով: Այս ուղղությամբ ընդունվել են գյուղատնտեսության զարգացման 2020-2030 թվականների զարգացման ռազմավարությունը, որով նախատեսված է ավանդական գյուղատնտնեսությունից անցում կատարել ինտենսիվ գյուղատնտեսության և թվային տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ զարկ տալ թվային գյուղատնտեսությանը, Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության հայեցակարգից բխող միջոցառումների 2017-2021 թվականների ծրագիրը: Վերջինիս նպատակն է ապահովել բնակչության բոլոր խմբերի համար առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը և նյութական պահուստում պահպանման ենթակա պարենամթերքի տեսականու անհրաժեշտ ծավալների ապահովումն ու համալրումը ինչպես նաև նախադրյալներ ստեղծել դիմակայելու ներքին ու արտաքին շուկայի անբարենպաստ փոփոխություններին և հնարավոր արտակարգ իրավիճակների բացասական հետևանքներին, ապահովել արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում պարենային անվտանգությունը և պարենային անկախությունը, կանխարգելել պարենային ճգնաժամերի առաջացումը

Հանրապետությունում ինքնաբավության բարձր մակարդակ է ապահովվում՝ կարտոֆիլի, բանջարաբոստանային մշակաբույսերի, պտղի, խաղողի, մանր եղջերավորների մսի, ձվի, ձկան ուղղությամբ, միջին մակարդակից բարձր ինքնաբավության մակարդակ գոյություն ունի խոշոր եղջերավորների մսի և կաթի ու կաթնամթերքի համար, իսկ ցորենի, հատիկաընդեղեն մշակաբույսերի, բուսական յուղի, թռչնի և խոզի մսի ինքնաբավության մակարդակը շարունակում է մնալ ցածր:

2019թ. ընդհանուր վերցրած գյուղատնտեսությունում նախորդ տարվա համեմատությամբ գրանցվել է համախառն արտադրանքի նվազում՝ 4.2 %-ով, ընդ որում բուսաբուծությունում՝ 7.7%, իսկ անասնաբուծությունում 1.2%: Երկրից ընդհանուր արտահանման մեջ գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը 2018 թվականին կազմել է 28.9 %:

ԿԶՆ 13 ՁԵՌՆԱՐԿԵԼ ԱՆՀԱՊԱՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Հայաստանն ունի կլիմայական փոփոխությունների արձագանքման հավակնոտ օրակարգ, և ըստ այդմ՝ ջանքեր է գործադրում ցածր ածխածնային զարգացման, վերականգնվող էներգիայի մասնաբաժնի ավելացման, էներգախնայողության խթանման, անտառածածկ տարածքների պահպանման և ընդլայնման ուղղությամբ, ինչպես նաև խթանում է էլեկտրական մեքենաների շահագործումը:

2018-2019 թվականներին մշակվել և ընդունվել է «Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգը՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից քիմիական նյութերի անվտանգ գործածությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության՝ հավաքման, փոխադրման, պահման, մշակման, վերամշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման, տեղադրման և թաղման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորող Կառավարության որոշում:

Ի կատարումն «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի հիմնադրույթների, որոնք նպատակաուղղված են շրջակա միջավայրի և բնակչության պաշտպանությանը կայուն օրգանական աղտոտիչների և հատկապես դիոքսինների և ֆուրանների ազդեցությունից, որոնք առաջանում են բաց այրումից, մշակվել է օրինագիծ, որով նախատեսվում է վարչական պատասխանատվություն և խիստ պատժամիջոցներ սահմանել արտադրության կամ սպառման թափոնները թափոնների գործածության օբյեկտներում, հատուկ հատկացված տեղերում կամ չարտոնագրված աղբավայրերում այրելու համար:

Մշակվել է «Ասբեստ պարունակող թափոնների կառավարման ուղեցույցի» նախագիծը, որով նախատեսվում է սահմանել ասբեստ պարունակող թափոնների օգտագործմանը, հավաքմանը, փոխադրմանը, տեղադրմանը ներկայացվող անվտանգ պայմանները՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա դրանց վնասակար ներգործությունը կանխելու նպատակով:

Հայաստանում ստեղծվել է ընդերքօգտագործման թափոններով զբաղեցված 44 լքված/տիրազուրկ տարածքի և 5 փակված պոչամբարի տեղեկատվական բազա, ընդունվել է դրանց ցանկն ու նկարագիրը հաստատելու մասին նախարարի հրամանը: Մինչ այժմ պոչամբարներում կուտակվող ընդերքօգտագործման թափոնները դասվում էին վտանգավորության 5-րդ

դասին, այսինքն համարվում էին ոչ վտանգավոր: 2020 թվականին նախարարի հրամանով գունավոր մետաղների հանքաքարի հարստացման արդյունքում առաջացող պոչանքներն ու շլամները դասվել են վտանգավորության 4-րդ դասին: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 2021 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող կարգավորումների՝ պոչամբարներում, արտադրական լցակույտերի, մակաբացման ապարների տեղամասերում և (կամ) համանման վայրերում ընդերքօգտագործման թափոնների մեկանգամյա տեղադրման կամ պահման համար ընդերքօգտագործողները պետք է վճարեն բնապահպանական հարկ:

Ընդունվել է օրենսդրական փաթեթ, որով արգելվել է օզոնային շերտը քայքայող նյութերի արտադրությունը ՀՀ-ում, ինչպես նաև «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության Կիգալիի փոփոխություն» համաձայնագրի կողմ չհանդիսացող երկրներից տվյալ նյութերի ներմուծումը, արտահանումը և տարանցիկ փոխադրումն այդ երկրներ:
Ընդունվել է մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների աստիճանական նվազեցմանն ուղղված օրենսդրական նախաձեռնությունը, որով 2022 թվականից կարգելվի մինչև 50 միկրոն հաստությամբ տոպրակների վաճառքը /իրացումը/:

2019թ. ապրիլից մեկնարկած ԵՄ կլիմայի համար ԵՄ-ՄԱԶԾ տարածաշրջանային ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն՝ Հայաստանի իրավական դաշտը ԵՄ ՉՀՀ (չափումների, հաշվետվայնության և հսկողության) կանոններին մոտարկելու նպատակով: Երկրների կարողությունները ՉՀՀ բնագավառում հզորացման նպատակով իրականացվում է ուսումնական սեմինարներ և ուսուցողական շրջայցեր:

ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի կողմերի 24-րդ համաժողովի ժամանակ՝ 2018 թվականի դեկտեմբերի 11-ին, Կատովիցեում ստորագրվել է «Կանաչ կլիմայի հիմնադրամի և ՀՀ կառավարության միջև» հիմնական համաձայնագիրը:

Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից շրջակա միջավայրի նախարարության համակարգման ներքո իրականացվող «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» 21,420,000 ԱՄՆ դոլար ծրագրի շրջանակներում իրականացվել են էներգետիկ արդյունավետության բարձրացման՝ ջերմոցային գազերի արտանետման ծավալների նվազեցման միջոցառումներ: Ծրագիրն ուղղված է հանրային և մասնավոր շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանը:

ԿԶՆ 14 ԱՊԱՀՈՎԵԼ ՕՎԿԻԱՆՈՍՆԵՐԻ, ԾՈՎԵՐԻ ՈՒ ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Լինելով դեպի ծով ելք չունեցող երկիր՝ ԿԶՆ 14-ը ՀՀ-ի հետ ուղղակիորեն չի առնչվում: Հետևաբար սույն ԿԶՆ չի հանդիսանում ազգայնացման ենթակա նպատակ: Սակայն հարկ է ընդգծել, որ Հայաստանում կարևոր ուշադրություն է դարձվում ձկնային պաշարների կառավարմանը, ձկնատեսակների պահպանմանը և ապօրինի ձկնորսության դեմ պայքարին: Մասնավորապես, հարկ է նշել նաև, որ յուրաքանչյուր տարի պետական բյուջեից «Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» միջոցառման իրականացման նպատակով տրամադրվում է 7,624.3 հազ. դրամ:

ԿԶՆ 15 ՊԱՀՊԱՆԵԼ. ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԵՎ ԽԹԱՆԵԼ ՑԱՄԱՔԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ԱՊԱՀՈՎԵԼ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՊԱՅՔԱՐԵԼ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԴԵՄ, ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԵՎ ՇՐՋԱԴԱՐՁԵԼ ՀՈՂԵՐԻ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄԸ, ԿԱՍԵՑՆԵԼ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏԸ

2019-ին առաջին անգամ պետբյուջեից անտառավերականգնման եւ անտառապատման աշխատանքներ կատարելու նպատակով «Հայանտառ» ՊՈԱԿ-ին հատկացվել է 424 մլն դրամ, որի միջոցով գնվել է անտառային տեխնիկա, կատարվել են լայնածավալ անտառավերականգնման աշխատանքներ: Կառավարությունը սկսել է Երևանի «Նորքի անտառների» տարածքում 45 հեկտար անտառի վերականգնման միջոցառումների ծրագիրը: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանվել են ավելի խիստ պատիժներ և պատասխանատվություններ անտառխախտումների համար, արգելվել է համապատասխան ապրանքային ծածկագրերով վառելափայտի, անտառանյութի և փայտանյութի արտահանումը երրորդ երկրներ: Պետական բյուջեի միջոցների և միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ԲՀՊՏ-ների տեխնիկական վերազինում:

Մեկնարկել են շրջակա միջավայրի հսկողության էլեկտրոնային համակարգի ներդրման աշխատանքները, ինչը հնարավորություն կտա իրական

ռեժիմում հսկել անտառի պահպանության մեջ ներգրավված անձանց աշխատանքը:

2019 թվականի ընթացքում Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում կատարվել են 2620 հա անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ, որից 172 հա անտառապատում և 2448 հա անտառվերականգնում:

Շրջակա միջավայրի նախարարի հրամանով հաստատվել են 2019-2020 թվականների համար որսի կենդանիների թույլատրելի չափաքանակները և ժամկետները: Առաջին անգամ շրջակա միջավայրի նախարարության առաջարկությամբ Գիտությունների ակադեմիայի Հիդրոլոգիայի ինստիտուտի կողմից ձեռք է բերվել ժամանակակից էխոլոտ սարքավորումը:

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի քարտուղարության աջակցությամբ և Կորեայի Հանրապետության ֆինանսավորմամբ 2018 թվականի օգոստոսին Հայաստանում մեկնարկել է «Արարատյան հարթավայրի հողերի չեզոք դեգրադացիայի գաղափարի իրականացում» պիլոտային ծրագիրը, որը մշակվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության նախաձեռնությամբ: Ծրագիրն ունի 3 բաղադրիչ՝ կաթիլային ոռոգում, բիոհումուսի կիրառում և դաշտապաշտպան անտառաշերտի հիմնում: «Հայաստանում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի իրականացման մասին» 7-րդ ազգային զեկույցը մշակվել և առցանց ներկայացվել է ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի քարտուղարություն PRAIS 3 պորտալի միջոցով:

Հայաստանում ինվազիվ տեսակների առավել բարձր խտացում է նկատվում մարդածին ներգործություն տակ գտնվող բնակմիջավայրերում, իսկ վերջերս նաև կլիմայի փոփոխության արդյունքում վտանգված էկոհամակարգերում: Առավել խոցելի են գյուղատնտեսական հանդակները, անտառները և ջրային էկոհամակարգերը:: Նշված խնդիրների կարգավորումների շրջանակներում մշակման փուլում է "Կենդանական աշխարհի մասին" և "Բուսականա աշխարհի մասին" ՀՀ օրենքների նախագծերը, որոնցում սահմանվել է ինվազիվ օտարածին կենդանական և բուսական տեսակ հասկացությունները, սահմանվել է դրույթ ինվազիվ կենդանական և բուսական տեսակների տարածվածության ուսումնասիրության, դրանց ներմուծման, օգտագործման նկատմամբ կանխարգելիչ գործողությունների իրականացան վերաբերյալ, սև ցուցակի կազումը :

Բնապահպանական մեծ կարևորություն է ներկայացնում նաև ծառատունկը, որն իրականացվում է տարբեր ձևաչափերով: 2020 թվականին Հայաստանի կառավարությունը նախաձեռնել է կարևորագույն

ծրագիր, ինչը պետք է իր գագաթնակետին հասներ 2020 թվականի հոկտեմբերի 10-ին: Նախատեսվում էր 10-րդ ամսվա 10-րդ օրվա դրությամբ ունենալ 10 միլիոն տնկված ծառ, ինչը Հայաստանի վարչապետի դիտարկմամբ կդառնա Հայաստանի Հանրապետության պետականության և շուրջ 10 միլիոնանոց բնակչության համախմբման խորհրդանիշ: Սակայն, պայմանավորված կորոնավիրուսի տարածմամբ ստեղծված իրավիճակով, այն հետաձգվել է մինչև 2021 թվականի վերջ: Միաժամանակ, մինչև 2020 թվականի մայիսի վերջ Հայաստանի բարձրադիր գոտիներում նախատեսվում է տնկել մոտ 2 մլն. ուռենի՝ ստեղծելով գետերի ափապաշտպան շերտեր:

Երկրում էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ձեռքբերումն ու կիրառումը խթանելու նպատակով սահմանված արտոնյալ հարկային ռեժիմի շնորհիվ նպաստավոր պայմաններ են ստեղծվել շարժական աղբյուրներից մթնոլորտային օդի աղտոտվածության նվազեցման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության էներգետիկ կախվածության նվազեցման համար: Էլեկտրական շարժիչով մոտոցիկլների (ներառյալ մոպեդները) կիրառման ավելացումը, բացի վերը նշված դրական ազդեցություններից, կնպաստի նաև խցանումների նվազմանն ու երթևեկության անվտանգության մեծացմանը: 2019 թվականին Հայաստան է ներմուծվել 145 էլեկտրոմոբիլ և 523 էլեկտրական շարժիչով մոտոցիկլներ և մոպեդներ, ինչը գերազանցում է 2018 թվականին ցուցանիշը բազմապատիկ անգամներով, երբ ներմուծվել է ընդամենը 12 էլեկտրամոբիլ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ (PARTNERSHIP)

ՀՀ-ն ակտիվորեն համագործակցում է միջազգային կառույցների հետ (ԵՄ, Համաշխարհային բանկ, Եվրոպական ներդրումային բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Ասիական զարգացման բանկ), ինչպես նաև փորձում է ակտիվացնել նաև քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ջանքերը՝ ուղղված կայուն զարգացման նպատակների կենսագործմանը: Չնայած Հայաստանը շարունակաբար օգտվում է միջազգային ֆինանսական կառույցների աջակցությունից ԿԶՆ նպատակների իրագործման համար, սակայն ինչպես 2018թ-ի VNR զեկույցում է նշվել ՀՀում ուղղակի ներդրումների ներհոսքի ցածր մակարդակը շարունակում է մնալ մարտահրավեր չնայած տնտեսության ազատականացման ուղղությամբ գրանցած մեծ առաջընթացին: Այն արձանագրվել է UNCTAD- ի

Համաշխարհային ներդրումների 2019 թվականի զեկույցում, որով ՕՈՒՆ-ների մուտքերը դեպի Հայաստան 2018-ին աճել են և կազմել 254 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը փոքր-ինչ աճել է 2017-ի համեմատ: ՕՈՒՆ-ները չափազանց կարևոր են աղքատության հաղթահարման, աշխատատեղերի ստեղծման, տնտեսական կայուն աճի ապահովման համար:

ԿԶՆ 17 ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱԿՏԻՎԱՑՆԵԼ ԳԼՈԲԱԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՈՒՆ ԱՅՍ ՆՊԱՏԱԿԻ

Առաջնորդվելով «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակներով ՀՀ-ն միջազգային կառույցների հետ համագործակցության օրակարգում ևս մշտապես կարևորում է դրանց ձեռքբերումը:

Կայուն զարգացումը հիմնարար նշանակություն ունի Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված ՀԸԳՀ համաձայնագրի վրա: Դա առաջին հերթին արտացոլվում է տարբեր ոլորտներիհիրահանգների և կանոնակարգերի մոտարկման միոցով: Ստորև համառոտ ներկայացվում է ՀԳԸՀ-ով ստանձնած պարտավորությունների կատարման արդյունքում ակնկալվող ազդեցության և 2030-ի օրակարգի միջև կապը:

- Համաձայանգրի կիրարկումը կնպաստի ավելի շատ աշխատատեղերի ստեղծմանը՝ ներդրումային մթնոլորտի բարելավման, առավել լայն ձեռնարկատիրական հնարավորությունների ստեղծման և էներգետիկայի մաքուր, այլընտրանքային աղբյուրների զարգացման շնորհիվ: Այս ամենը կնպաստի ԵՄ և միջազգային չափանիշներին համապատասխան կայուն և կանխատեսելի բիզնես միջավայրի ձևավորմանը, ապրանքների և ծառայությունների առևտրի աճին: Ավելի շատ աշխատատեղերի ստեղծումը փոխկապված է կայուն զարգացման տնտեսական ուղղության՝ մասնավորապես ԿԶՆ 7, ԿԶՆ 8, ԿԶՆ 9, ԿԶՆ 10, ԿԶՆ 11, ԿԶՆ 12-ի հետ, միաժամանակ այս համագործակցությունը կնպաստի ԿԶՆ 1,2,6 և 13-ի ձեռքբերմանը՝ լուծելով սոցիալական և բնապահպանական մի շարք խնդիրներ:
- **Ավելի արդար կանոններ:** Համաձայնագրի իրականացումը կոնկրետ օգուտներ կբերի քաղաքացիներին, այդ թվում ավելի արդար կանոնների ներդրման միջոցով, մասնավորապես՝ մրցակցությանը և պետական գնումների ոլորտում: Կներդրվեն կանոններ, որոնք զերծ են կողմնակալությունից, անազնվությունից կամ անարդարությունից, ավելի

հիմնավոր կպաշտանվի մտավոր սեփականության իրավունքը, ինչին անդրադառնում են նաև ԿԶՆ 3,9,16 և 17.1 ձևակերպված թիրախները: Համաձայնագրով սահմանվող պետական գնումների կազմակերպման նոր կանոնները խթանում են հաշվետվողականությունը և կանխում կոռուպցիան ՝համաձայն ԿԶՆ 12.7, 12.c և 16, ինչպես նաև կնպաստի արժանապատիվ աշխատատեղերի ստեղծմանը, որը նշված է ԿԶՆ 8 թիրախներում:

- **Փողի դիմաց ավելի լավ արժեք:** Համաձայնագրի կիրարկումը նաև ուղղված է պետական գնումների ավելի թափանցիկ ընթացակարգերի ձևավորմանը, որը արդյունքում մրցույթների կազմակերպման և սուբսիդավորման ընթացակարգեր կլինեն անաչառ , որը սերտորեն փոխկապակցված է ԿԶՆ 10,16,12.7, 12.c-ում սահմանված թիրախների հետ: Ավելին, համաձայնագրերի իրականացումը կապահովի ավելի մատչելի էներգիայի հասանալիություն՝ շուկայի ազատականացման և էլեկտրաէներգիայի ոլորտում ավելի բարձր մրցակցության ապահովման միջոցով (ԿԶՆ7): Բացի այդ անհարկի խորչընդոտների վերացման արդյունքնում՝ սպառողները կստանան ապրանքների ավելի լայն ընտրության և ավելի ցածր գների հնարավորությունն՝ (ԿԶՆ2, 10, 12):
- **Անվտանգության բարձրացում:** Սպառողների անվատնգության ապահումը արտադրանքի որակի անվտանգության բարձրացման և համակարգերի ստանդարտների բարձրացման միջոցով սերտորեն առնչվում է ԿԶՆ 3.9, 6.1, 6.2, 7.1, 11, 12.4 և 12.5:
- **Անվտանգության բարձրացում:** Կազմակերպված հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարը, որը ՀԸԳՀ-ով նախատեսված քաղաքական երկխոսության տարրերից է սերտորեն առնչվում է ԿԶՆ 4.7, 5.2, 16.1, 16.4, 16.a. -ի հետ:Իսկ միջուկային անվտանգության ապահովումը՝ ԿԶՆ 11, 12.4 և12.5-ի հետ
- **Ավելի մաքուր միջավայր:** ՀԸԳՀ-ի դրույթները ուղղված են կայուն և էկոլոգիապես անվտանգ տնտեսական զարգացմանը՝ ավելի բարձր բնապահպանական ստանդարտներ հաստատելու միջոցով:Համաձայնագիրը նախատեսում է կլիմայի փոփոխության մեղմացման համար նշանակալից ապրանքների և ծառայությունների առևտրի խոչընդոտների վերացում (վերականգնվող էներգիայի զարգացմանն ուղղված ապրանքներ և էներգաարդյունավետ ապրանքներ), ռեսուրսների կայուն և արդյունավետ օգտագործում և կենսաբազմազանության պահպանում, որոնք առանցքային ԿԶՆ 2030

օրակարգի և մասնավորապես ԿԶՆ 6, 12, 13, 14 և 15 նպատակների համար:

- **Ավելի որակյալ կրթության և հետազոտական հնարավորություններ:** Կրթության որակի բարձրացումը և բոլոր ուղղություններով հետազոտական հնարավորությունների ընդլայնումը ուղղակիորեն կապված է ԿԶՆ 2030 օրակարգի և մասնավորապես ԿԶՆ 3.b, 4, 7.a, 9.5, 9.b, 14.a և 17 -ի հետ
- **Ժողովրդավարության և մարդու իրավունքների ամրապնդում:** ՀԸԳՀ-ում նշված մի շարք հանձնառություններ վերաբերում են ժողովրդավարության ամրապնդմանը, հավասար արդարադատությանը, բոլոր մակարդակներում անաչառ, հաշվետու և ներառական ինստիտուտների ձևավորմանը, որոնք ԿԶՆ 16-ի հիմնաքարերն են հանդիսանում:

Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) հետ ծավալվում է համագործակցություն հետևյալ ոլորտներում

- Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ պաշտպանություն և կառավարման համակարգի բարեփոխումներ (ԿԶՆ 16,ԿԶՆ 10, ԿԶՆ 5)
- Առողջապահություն և սոցիալական պաշտպանություն (ԿԶՆ 3 ԿԶՆ 4, ԿԶՆ 2)
- Ներառական և կայուն տնտեսական աճ (ԿԶՆ 8, ԿԶՆ 4, ԿԶՆ 7, ԿԶՆ 11, ԿԶՆ 9, ԿԶՆ 15)

Համաշխարահային բանկի հետ երկրի գործընկերության շրջանակով նախատեսվում է համագործակցությոն հետևյալ ոլորտներում

- Արտահանմանն ուղղված ընկերությունների մրցունակության խթանում (ԿԶՆ 8)
- Մարդկային կապիտալի և հավասարության բարելավում. (ԿԶՆ 1, ԿԶՆ2, ԿԶՆ3, ԿԶՆ4, ԿԶՆ 10, ԿԶՆ 16)
- Շրջակա միջավայրի և բնական պաշարների կայուն կառավարում(ԿԶՆ 11, ԿԶՆ 12, ԿԶՆ 13)

Եվրոպական ներդրումային բանկը աջակցում է ՀՀ կառավարության արդիականացման և հզորացման ձեռնարկած միջացառումներին հետյալ ոլորտներում

- Տրանսպորտ (ԿԶՆ9, ԿԶՆ11)
- Փոքր և միջին ձեռնարկություններ (ԿԶՆ8),
- Ջրամատակարարում (ԿԶՆ9, ԿԶՆ6, ԿԶՆ 11),
- Էներգետիկա (ԿԶՆ9, ԿԶՆ6, ԿԶՆ11),

- Ենթակառուցվածքներ (ԿԶՆ9,ԿԶՆ6, ԿԶՆ11) :

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերն են

- կայուն ենթակառուցվածքների հզորացում (ԿԶՆ7, ԿԶՆ 8, ԿԶՆ 9, ԿԶՆ 11)
- Ենթակառուցվածքներ Արդյունաբերություն, առևտուր և ագրոբիզնես (ԿԶՆ7, ԿԶՆ 8, ԿԶՆ 9, ԿԶՆ 11) :

Ասիական զարգացման բանկի հետ համագործակցության շրանակը ներառում է

- Ներդրումներ առաջնահերթ ենթակառուցվածքներում (ճանապարհների, էներգետիկայի և քաղաքային ենթակառուցվածքի կատարելագործում) (ԿԶՆ7, ԿԶՆ 8, ԿԶՆ 9, ԿԶՆ 11)
- Թիրախային ծառայության մատուցման բարելավումներ (կրթության, առողջապահության ծառայություններ, դպրոցների սեյսմիկ անվտանգություն, ՓՄՁ-ների ֆինանսավորում և ագրոբիզնես, կլիմայի փոփոխություն և շրջակա միջավայր) (ԿԶՆ 2, ԿԶՆ3, ԿԶՆ7, ԿԶՆ 8, ԿԶՆ 9, ԿԶՆ 11, ԿՆԶ 13, ԿԶՆ15),
- Ավելի մեծ տարածաշրջանային համագործակցություն և ինտեգրում (գյուղատնտեսական մրցունակություն, առևտուր, զբոսաշրջություն, անդրսահմանային ենթակառուցվածքի բարելավումներ) (ԿԶՆ 8, ԿԶՆ 7, ԿԶՆ 11):

KFW-Ի հետ համարծակցությունը ներառում է հետևյալ ոլորտները

- Ոռոգման համակարգի զարգացում (ԿԶՆ6),
- Խմելու ջուր (ԿԶՆ6)
- Էներգետիկա (ԿԶՆ 7, ԿԶՆ8):
- Գյուղատնտեսական ապահովագրություն(ԿԶՆ8, ԿԶՆ 12),
- Շրջակա միջավայրի և բնական պաշարների կայուն կառավարում (ԿԶՆ 13, ԿԶՆ 15)
- ՓՄՁ ֆինանսավորում, այդ թվում՝ էներգախնայողություն և վերականգնվող էներգետիկա (ԿԶՆ 7, ԿԶՆ 8):

01.10.2019թ.-ին Հաստատվել է նաև **Եվրասիական զարգացման բանկի** հետ ներդրումային համագործակցության ճանապարհային քարտեզ 2020-2022թթ. համար, որով նախատեսվում է աջակցություն ՀՀ կառավարությանը

- Ենթակառուցվածքների զարգացման (ԿԶՆ 7):,

- Էներգետիկայի ոլորտի ծրագրերի, այդ թվում՝ վերականգնվող էներգետիկա (ԿԶՆ 7):
- Ագրոարդյունաբերություն (ԿԶՆ 8),
- Բարձր տեխնոլոգիաների(ԿԶՆ 8),
- Սոցիալական ոլորտներում (ԿԶՆ 1, ԿԶՆ 2, ԿԶՆ 3, ԿԶՆ 4):

Կայուն զարգացման նպատակների իրականացման գործընթացին մեծապես նպաստում է նաև Կայուն զարգացման նպատակների ազգային նորարարական կենտրոնը, որը Հայաստանի կառավարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի՝ աշխարհում առաջին համատեղ նախաձեռնությունն է, որը կայուն զարգացման նպատակների իրականացմանը նպաստելու է նորարարական լուծումների և պետական-մասնավոր հատվածի համագործակցության համար հնարավոր հարթակներ ստեղծելու միջոցով:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՌՈՔԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԸ

COVID-19 համաճարակը բնութագրվում է որպես մեր ժամանակների ամենածանր առողջապահական ճգնաժամը և 2-րդ Համաշխարհային պատերազմից հետո ամենամեծ մարտահրավերը, որին բախվել է ողջ աշխարհը: Ասիական տարածաշրջանում տարածվելուց հետո այն տարածվեց բոլոր մայրցամաքներում:

Հայաստանի Հանրապետությունը ևս անմասն չի մնացել կորոնավիրուսի տարածման առողջապահական և սոցիալա-տնտեսական բացասական հետևանքներից: Հայաստանում կորոնավիրուսի առաջին դեպքը գրանցվել է մարտի 1-ին, որից հետո գնալով դեպքերը տարածվեցին: Մարտի 16-ին հայտարարվեց արտակարգ դրություն 30 օրով, որը ևս նույն ժամանակահատվածով երկարաձգվեց մինչև հունիս 13-ը, այնուհետև՝ մինչև հունիսի 13-ը: Արտակարգ դրության հիմնական նպատակն էր հանրապետությունում խոչընդոտել նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը՝ Հայաստանի ամբողջ տարածքում արգելելով հավաքների և գործադուլների կազմակերպումը, անցկացումը, ինչպես նաև սահմանափակելով հանրային միջոցառումների կազմակերպումը, անցկացումը և դրանց մասնակցությունը, մասնավորապես՝ քսան և ավել անձանց մասնակցությամբ անցկացվող համերգները, ցուցադրությունները, թատերական

ներկայացումները և սպորտային, մշակութային, կրթական միջոցառումները, ժամանցային միջոցառումները, տոնական և հիշատակի միջոցառումները, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության), թաղման միջոցառումները և պարետի ցուցումով այլ միջոցառումներ:

Կառավարությունն իրականացրել է կորոնավիրուսի դեմ պայքարի մի շարք առողջապահական միջոցառումներ: Մասնավորապես կենտրոնացնելով կորոնավիրուսի դեմ պայքարը ոչ միայն հիվանդների մեկուսացման և բուժման, բուժսարքավորումների վերազինման, այդ թվում՝ թոքերի արհեստական շնչառության ապարատներով, համապատասխան հանդերձանքով, դիմակներով և այլ միջոցներով համալրմամամբ, բուժաշխատողներին համարժեք լրացուցիչ վարձատրության ապահովմամբ, համապատասխան վերապատրաստումներով, այլև ախտահանման աշխատանքներով (այդ թվում՝ հանրային տրանսպորտը), հիվանդների հետ շփված անձանց մեկուսացնելով՝ ապահովելով նրանց համար մարդու իրավունքների պատշաճ մակարդակ՝ տեղավորելով այդ անձանց հյուրանոցներում և ապահովելով որակյալ և ապահով սննդով:

Կորոնավիրուսի դեմ առողջապահական ու կանխարգելիչ ակտիվ պայքարից բացի 2020թ.-ի մարտի 26-ից սկսած ՀՀ կառավարությունն ընդունել է կորոնավիրուսի հետևանքների հակազդման սոցիալ-տնտեսկան մի շարք միջոցառումներ: Այդ միջոցառումների հիմնական նպատակներ են.

- տնտեսության կայուն և շարունակական զարգացման ապահովումը՝ ըստ ոլորտների օժանդակելով ՀՀ առանձին տնտեսավարողներին՝ կորոնավիրուսի տարածման հետևանքով կանխատեսվող ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերը մեղմելու նպատակով,
- աջակցության թիրախավորումը գյուղատնտեսության ոլորտին, բարձր տեխնոլոգիաների ոլորտին, միկրոձեռնարկատիրության սուբյեկտներին և այլն,
- կորոնավիրուսի հետևանքով աշխատանք կորցրած անձանց օժանդակումը, տուժած ոլորտների աշխատողներին աջակցությունը, ապահովել աջակցություն հատուկ խմբերին, մասնավորապես՝ նպաստառուներին, ուսանողներին, ցածր կոմունալ սպառում ունեցող բնակիչ-բաժանորդներին :

Կառավարության կողմից ընդունվել են շուրջ 2 տասնյակ որոշումներ, որոնց միջոցով կորոնավիրուսի հետևանքների չեզոքացման համար իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. նպատակային վարկերի համաֆինանսավորում, վերաֆինանսավորում և տոկոսադրույքի սուբսիդավորում,

2. գյուղատնտեսական տարատեսակ վարկերի սուբսիդավորում գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող առանձին տնտեսավարողներին, ՓՄՁ-ներին և ֆիզիկական անձանց,
3. աջակցություն աշխատատեղերի պահպանման համար՝ միանվագ դրամաշնորհի ձևով,
4. աջակցություն միկրոձեռնարկատիրության սուբյեկտներին,
5. աջակցություն բարձր տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարողներին,
6. ուսանողների վարձավճարների փոխհատուցում, ինչպես նաև ուսանողական վարկերի սուբսիդավորում,
7. աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն,
8. չաշխատող և երեխաներ ունեցող ընտանիքներին աջակցություն,
9. նպաստառու ընտանիքներին աջակցություն,
10. որոշակի սպառման շեմից ցածր բոլոր բաժանորդների համար կոմունալ վարձավճարների (գազ, ջուր, էլեկտրաէներգիա) որոշակի չափով փոխհատուցում.շ,
11. տուժած ոլորտների աշխատակիցների աջակցություն:

Բացի այդ Ազգային ժողովում պատգամավորների նախաձեռնությամբ ընդունվել են որոշ օրենքներ, որոնք ևս ուղղված են կորոնավիրուսի տնտեսական հետևանքների մեղմմանը, մասնավորապես՝ չկատարված հարկային պարտավորության նկատմամբ հաշվարկվող տույժի չափը կրկնակի նվազեցվել է, հնարավորություն է ընձեռվել ներդրումների նպատակով կատարված ծախսագրումները (ամորտիզացիոն մասհանումները) կատարել ոչ թե սահմանված նվազագույն ժամկետներում, այլ որոշել սեփական հայեցողությամբ (առնվազն մեկ տարում):

ՀԵՏԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Աշխարհում ընթացող տեխնոլոգիական զարգացումները մարտահրավերներ են նետում՝ առաջ բերելով նոր պահանջներ ինչպես նաև ռիսկեր: Այս միտումը, բնորոշ լինելով զարգացող քաղաքներին, նկատելի է նաև Երևանում:

Երևան քաղաքում կառուցապատման, տրանսպորտի, արտադրությունների և ծառայությունների օրեցօր ավելացումը, տեղեկատվության փոխանակման ծավալների և արագության նոր պահանջները, և ընդհանրապես քաղաքային կյանքի ինտենսիվության բարձրացումը նոր խնդիրներ է առաջ բերում, որոնց լուծման համար անհրաժեշտ են նորարարական մոտեցումներ և դրանց իրագործման ռազմավարություն:

2019 թվականին Մակի զարգացման ծրարգրերի գրասենյակի աջակցությամբ մշակվեց քաղաքային տնտեսության ոլորտների թվային տրանսֆորմացիայի «ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ» ռազմավարական ծրագիրը, ինչը ուղենիշ է հանդիսանալու ներդրվող համակարգերի, առաջնահերթությունների և դրանց կառուցվածքային սկզբունքների համար:

«ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ» ծրագրով նախատեսվում է քաղաքային տնտեսության բոլոր ոլորտներում ներդնել գործառույթների ավտոմատացման, տեղեկատվական, վերահսկման, կառավարման համակարգեր, տրամադրել էլեկտրոնային ծառայություններ, ներդնել քաղաքի անվտանգությանն ու դիմակայունության բարելավմանն ուղղված համակարգեր, նորարարական տեխնոլոգիաների կիրառումով բարելավել քաղաքի էկոլոգիան, զարգացնել ենթակառուցվածքները, ստեղծել քաղաքի միասնական կառավարման, և ծառայությունների վերահսկման կենտրոն, ապահովել առկա համակարգերից և բանացանցից անհրաժեշտ տվյալների մեկտեղումը և դրանց տարածաժամանակային վերլուծությունը՝ որոշումների ընդունման գործընթացների աջակցության նպատակով:

SDG 16-ի ուղղությամբ

Հանրային կառավարման շարունակական բարեփոխումները Հայաստանի համար խիստ կարևոր են՝ հաշվի առնելով, որ 2018 թվականին իրականացվել և 2019 թվականին հրապարակվել է ՍԻԳՄԱ փորձագիտական խմբի կողմից իրականացված համապարփակ ելակետային զեկույցը, որտեղ 6 հենասյուների հիման վրա գնահատվել է Հայաստանի հանրային կառավարման համակարգը: Նշված վերլուծության հիման վրա պետք է իրականացվեն համապարփակ հանրային կառավարման բարեփոխումներ:

ԿԶՆ 16-ի մարտահրավերներից է նաև դատական բարեփոխումների իրականացումը, որի նպատակով ընդունվել է դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունը, որի հիման վրա ակնկալվում է իրականացնել բազմաթիվ կարճաժամկետ ու հրատապ, և երկարաժամկետ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն համակարգային բարեփոխումներին, դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման կառուցակարգի բարելավմանը, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերի և ընթացակարգերի ներդրմանը, հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանը, դատավորների և նրանց

աշխատակազմի վարձատրության բարձրացմանը, դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը և դատական քննության ողջամիտ ժամկետի ապահովմանը և այլն:

SDG 15-ի ուղղությամբ

ՀՀ տարածքում հաշվառված է շուրջ 60 տեսակի օգտակար հանածոներ պարունակող 871-ից ավելի հանքավայր, որից 43-ը՝ մետաղական: Շրջակա միջավայրի համար լրջագույն սպառնալիք են հանդիսանում տասնամյակների ընթացքում ձևավորված մետղական օգտակար հանածոների պոչամբարները, որոնք կարող են առաջացնել էկոլոգիական և բնակչության առողջության համար լուրջ ռիսկեր, ինչպես նաև մակերևութային ջրերին և ոռոգման ցանցերին միախառնման դեպքում կարող են հանգեցնել ոռոգման ջրերի ծանր մետաղներով աղտոտմանը: Հետևաբար դրանց նկատմամբ պատշաճ վերաբերմունքը պետք է լինի ապագային միտված կարևոր մարտահրավեր:

Ազգային կամավոր գլոբալ նպատակ է հանդիսանում՝ Հայաստանում հողերի չեզոք դեգրադացիային հասնելու համար մինչև 2040 թվականը 2000-2010 թվականների ընթացքում հողում կորցված օրգանական ածխածնի պաշարների վերականգնումը և դրանք, 2015 թվականի վիճակի համեմատ, ավելացումը 2.8 %-ով: